

—Նմանութիւն կայ, բայց լաւ չեմ ճանաչում, —գոռաց նաև  
—ես եկել եմ քեզնից ներողութիւն խնդրելու, —ձայն  
տուեց նեխլիւդովը բարձր ձայնով, առանց ելաջների, ինչպէս  
մի սերտած դաս:

Երբ նա գոռաց այդ խօսքերը, ամօթ զգաց ու յետ նայեց:  
Բայց իսկոյն և եթ մտածեց, որ աւելի լաւ է, որ ամաչում է,  
որովհետև պարտական է ամօթահար լինել Ու բարձր ձայնով  
շարունակեց.

—Ես վատ կերպով զգուելի կերպով վարուեցի քեզ հետ,  
ներիր ինձ:

Մասլօվան, անշարժ կանգնած, չէր հեռացնում նրանից իր  
շի հայեցքը:

Նեխլիւդովը չը կարողացաւ այլ ևս խօսել ու հեռացաւ  
ցանցապատից, աշխատելով զսպել կուրծքը ցնցող հեկեկանքը:  
Բանտապետը, այն նոյն մարդը, որ նեխլիւդովին ուղար-  
կել էր կանանց բաժանմունքը, ակներևաբար հետաքրքրուած  
նրանով, եկաւ այդ բաժանմունքը և, տեսնելով, որ նա ցան-  
ցապատի մօտ չէ, հարցընց, թէ ինչու նա չի խօսում իր ու-  
ղած կալանաւորուհու հետ նեխլիւդովը սրբեց քիթը և, թա-  
փահարուելով ու աշխատելով հանգիստ տեսք ունենալ, պա-  
տասխանեց.

—Զեմ կարողանում ցանցապատի միջով խօսել, ոչինչ չի  
լսում:

Բանտապետը մտածեց:

—Որ այդպէս է, կարելի է մի փոքր ժամանակով նրան  
դուրս բերել այս կողմը:

—Մարեա կարլօվսա, —դիմեց նա վերակացուհուն: —Դուրս  
բերէք Մասլօվային:

## XLII

Մի բոպէ անցած կողքից դուրս եկաւ Մասլօվան:  
Կակուղ քայլերով նա քիփ մօտեցաւ նեխլիւդովին, կանգ առաւ  
ու յօնքերի տակից նայեց նրան: Սև խոպոպները, ինչպէս և  
նախանցեալ օրը, դուրս էին ցցուած գլխաշորի տակից և անա-  
ռողջ, թիսիկ ու սպիտակ երեսը սիրուն էր ու բոլորովին հան-  
գիստ. միայն պսպղան ու սև աչքերն էին առանձին կերպով  
փայլում ուռած կոպերի տակից:

—Կարող էք այստեղ խօսել, —ասաց բանտապետը ու հե-  
ռացաւ:

Նեխլիւդովը մօտեցաւ պատի մօտի նստարանին:

Մասլօվան հարցական հայեացքով նայեց բանտապետի օգ-  
նականին ու յետոյ, զարմացածի պէս վեր քաշելով ուսերը,  
գնաց Նեխլիւդովի յետեից դէպի նստարանը և նստեց նրա կող-  
քին, շիտկելով ներքնազգեստը:

—Գիտեմ, որ ձեզ համար դժուար է ինձ ներել,—սկսեց  
Նեխլիւդովը, սակայն նորից կանգ առաւ, զգալով, որ արտա-  
սուքը խանդարում է, —բայց եթէ այլ ես անկարելի է ուղղել  
անցածը, գոնէ այժմ ես պատրաստ եմ անել այն բոլորը, ինչ  
որ կարող եմ Ասացէք...

—Ի՞նչպէս գտաք ինձ, —չը պատասխանելով նրա հարցին,  
հարցրեց Մասլօվան և նայելով և չը նայելով նրա վրայ իր շիլ  
աչքերով:

«Տէր Աստուած: Օգնիր ինձ: Խելամուտ արա, թէ ինչ  
պէտք է անեմ, ասում էր ինքն իրան Նեխլիւդովը, նայելով  
նրա դէմքին, որ այնքան փոփոխուած էր այժմ:

—Երէկ չէ միւս օրը ես երգուեալ ատենակալ էի, —ասաց  
նա, —երբ ձեզ դատում էին, Զը ճանաչեցիք ինձ:

—Զէ, չը ճանաչեցի: Ժամանակ չը կար ճանաչելու: Ա-  
սենք, չէի էլ նայում, —պատասխանեց նա:

—Երեխայ է եղել, ասում են, —հարցրեց Նեխլիւդովը ու  
զգաց, որ երեսը կարմրատակեց:

—Փառք Աստուածու, ծնուելուն պէս մեռաւ, —կարճ կեր-  
պով ու չարագին պատասխանեց Մասլօվան, շուր տալով նրա-  
նից հայեացքը:

—Ի՞նչպէս եղաւ այդ, ինչից մեռաւ:

—Ինքս էլ հիւանդ էի, քիչ մնաց մեռնէի, —ասաց նա, ա-  
ռանց աչքերը բարձրացնելու:

—Մօրաքոյներս ի՞նչպէս թողեցին, որ դուք հեռանաք:

—Ո՞վ կը պահի երեխատէր աղախին: Հէնց որ նկատեցին,  
իսկոյն դուրս արեցին: Է՛հ, ինչեր եմ ասում, —ոչինչ չեմ յի-  
շում, ամեն բան մոռացել եմ: Եղածը եղաւ վերջացաւ:

—Զէ, դեռ չի վերջացել: Ես չեմ կարող այդ բանը այդպէս  
թողնել: Ուզում եմ գոնէ այժմ քաւել մեղքս:

—Քաւելու բան չը կայ. ինչ որ եղաւ՝ անց կացաւ, պըր-  
ծաւ, —ասաց նա և, Նեխլիւդովի համար բոլորովին անսպասելի  
կերպով, յանկարծ նայեց նրան ու անսիրժ կերպով ժպատաց  
հրապուրիչ ու խղճուկ ժպիտով:

Մասլօվան ամեննեին չէր սպասում, թէ կարող է տեսնել  
Նեխլիւդովին, մանաւանդ այժմ և այսեղ, ուստի և նրա գալք  
առաջին բոպէին զարմացրեց նրան ու յիշեցրեց այն բանը, ինչ  
որ երբէք չէր յիշում: Առաջին բոպէին նա անորոշ կերպով յի-

շեց զգացմունքների և մտքերի այն նոր ու հրաշալի աշխարհը, որ նրա աչքի առաջ բաց արեց իրան սիրող ու իրանից սիրուած չքնաղ պատամին, և յետոյ այդ պատանու անհասկանալի անգըթութիւնը և այն ամբողջ շարք ստորութիւնները և տանջանքները, որոնք հետեւցին այդ կախարդական երջանկութեանը և առաջ եկան այդ երջանկութիւնից: Յիշեց ու սիրող կոկծաց: Բայց անկարող լինելով գլուխ հանել այդ յիշողութիւններից, նա այժմ էլ այնպէս վարուեց, ինչպէս վարում էր միշտ, հեռու քշեց այդ յիշողութիւնները և աշխատեց սքօղել նրանց անառակ կեանքի առանձին մշուշով: Առաջին րոպէին նա իր երեակայութեան մէջ ի մի ձուլեց առջեռումը նստած մարդուն այն պատանու հետ, որին սիրում էր մի ժամանակ, բայց տեսնելով, որ սաստիկ կոկծալի է այդ, նա այլ ևս գադարեց այդ պատկերները ի մի ձուլելուց: Այժմ այդ մաքուր հագուստով ու անուշացրած մօրուքով քնքշամարմին պարոնը նրա համար այն նեխլիւգով չէր, որին նա սիրում էր, այլ միայն մէկը այն մարդկանցից, որոնք, պէտք ունեցած ժամանակները, օգտում են իր նման արարածներից և որոնցից որքան կարելի է շահաւէտ կերպով պէտք է օգտուեն իր նման արարածները: Ուստի և նա հրապուրիչ կերպով ժագուաց նեխլիւգովին:

Մի փոքր ժամանակ նա լուռ մնաց, մտմտալով, թէ ինչպէս օգուտ քաղի նեխլիւգովից:

—Առաջուանը անցել պրծել է, —ասաց նա: —Դժուարը հիմի է, որ Սիրիք են քշում ինձ:

Եւ շրթունքները դողացին այդ սարսափելի խօսքը արտասանելիս:

—Ես գիտէի, ես հաւատացած էի, որ դուք անմեղ էք, —ասաց նեխլիւգովը:

—Ի հարկէ, մեղաւոր չեմ: Միթէ ես գող եմ, աւազակ եմ: Այստեղ ասում են, թէ ամեն բան փաստաբանից է կախուած, —շարունակեց նա: —Ասում են, պէտք է խնդիրք տալ: Բայց, ասում են, թանգ են ուզում փաստաբանները...

—Այո, անպատճառ պէտք է, —ասաց նեխլիւգովը: —Ես արդէն դիմել եմ փաստաբանի:

—Պէտք է փողին չը խնայել ու լաւ փաստաբան բռնել, —ասաց Մասլօվան:

—Ի՞նչ որ կարելի լինի կ'անեմ:

Լոռութիւն ափրեց:

Մասլօվան էլի այնպէս ժագուաց:

—Ես ուզում էի ձեզնից, եթէ կարելի է... փող խնդիրել: Շատ չէ... մի տասը ուուրի, —յանկարծ ասաց Մասլօվան:

— Հաւ, լաւ,—ամաչելով ասաց Նեխլիւդօվը ու ձեռքը տարաւ դէպի քսակը:

Մասօվան շատապով նայեց բանտապետին, որ գնում-գալիս էր սենեկում:

— Սրա մօտ չը տաք. երբ որ հեռանայ, այն ժամանակ տուէք. թէ չէ կ'առնի ձեռքիցս:

Հէնց որ բանտապետը շուռ եկաւ, Նեխլիւդօվը հանեց գրպանից քսակը, բայց մինչև տասը ոռւրիանոցը Մասօվային տալը՝ բանտապետը նորից դարձաւ նրանց կողմը. Նեխլիւդօվը փողը հուպ տուեց ձեռքի մէջ:

«Ի՞նչ բան է սա այժմ, մի մեռած կին միայն», մտածեց Նեխլիւդօվը, նայելով այդ՝ մի ժամանակ համակրելի, իսկ այժմ պղծուած թխլիկ դէմքին, որ վատ ցոլքով փայլող սեռ ու շիլ աշքերով հետեւում էր մի կողմից բանտապետին, միւս կողմից նրա ձեռքի մէջ սղմուած փողին: Եւ, այդ մտածելով, մի բոպէ տատանման մէջ ընկաւ նա:

Այն գայթակղիչը, որ երէկ գիշեր խօսում էր նրա հոգու մէջ, նորից սկսեց խօսել, աշխատելով, ինչպէս միշտ, դարձնել նրա ուշադրութիւնը այն հարցից, թէ ինչ պէտք է անել, այն հարցի վրայ, թէ ինչ դուրս կը գայ նրա արածից և ինչն է օգտակար:

«Արածդ զուր կ'անցնի այդ կնոջ համար,—ասում էր այդ ձայնը,—միայն մի քար կը կապես վզիցդ, որ ջրի տակը կը քաշի քեզ ու թոյլ չի տալ, որ օգտակար լինես ուրիշներին»:

— Հը, մտածեց նա, ինչ որ կայ տամ իրան, մնաս բարև ասեմ ու ընդ միշտ վերջ տամ այս բանին:

Բայց իսկոյն և եթ զգաց, որ այժմ, այդ բոպէին, ինչ որ ամենակարեւոր բան է կատարւում իր հոգու մէջ, որ այդ բոպէին իր ներքին կեանքը կարծես մի տատանուող կշեռքի վրայ է գտնուում, որ կարող է այս կամ այն կողմը թերքուել ամենաշնչին ճիգի ճնորհիւ: Եւ նա գործ գրեց այդ ճիգը, օգնութիւն հայցելով Այն Աստուծուց, Որին նա երէկ զգաց իր հոգու մէջ, և Աստուծ իսկոյն և եթ ներչնչեց նրան: Նա վճռեց անմիջապէս ասել Մասօվային ամեն ինչ:

— Կատիւշա, ես եկել եմ քեզնից ներողութիւն ինդեկու, իսկ դու չը պատասխանեցիր, ներեցիր արդեօք ինձ, ներելու ես արդեօք երբեմիցէ,—ասաց նա, յանկարծ «զու»-ի անցնելով:

Մասօվան ականջ չէր դնում նրա ասածին, այլ նայում էր մէկ նրա ձեռքին, մէկ՝ բանտապետին: Հէնց որ բանտապետը շուռ եկաւ, նա իսկոյն ձեռքերը մեկնեց դէպի Նեխլիւդօվը, վերցրեց փողը ու կոխեց գօտիի մէջ:

— Զարմանալի բաներ էք ասում, — ասաց նա, ինչպէս  
թուաց Նեխլիւդօվին, արհամարհական ժպիտով:

Նեխլիւդօվը զգում էր, որ Մասլօվայի մէջ ինչ որ մի բան  
կայ, ուղղակի թշնամական դէպի ինքը, որ պաշտպանում է նը-  
րան այնպէս, ինչպէս որ նա կայ, և թոյլ չէ տալիս իրան թա-  
փանցել նրա սիրութ:

Բայց, զարմանալի բան, — այդ ոչ միայն հակակրանք չէր  
ազդում նրան դէպի Մասլօվան, այլ աւելի ևս քան առաջ՝ գը-  
րաւում էր դէպի նա մի նոր ու առանձին ոյժով: Նա զգում էր,  
որ ինքը պէտք է սթափեցնի Մասլօվայի հոգին, զգում էր և  
այն որ սարսափելի դժուար է այդ. — բայց հէնց այդ դժուարու-  
թիւնը գրաւիչ էր նրա համար: Նա այնպիսի բան էր զգում  
այժմ դէպի Մասլօվան, ինչպիսի բան երբէք չէր զգացել առաջ  
ոչ դէպի նա, ոչ դէպի մի ուրիշը, — այնպիսի զգացմունք, որի  
մէջ չը կար ոչինչ անձնական բան. Նա ոչինչ չէր ցանկանում  
Մասլօվայից իր համար, այլ ցանկանում էր միայն, որ նա  
դադարի այնպիսի կին լինելուց, ինչպէս էր այժմ, ցանկանում  
էր, որ նա սթափուի և դառնայ այնպիսի էակ, ինչպէս ա-  
ռաջ էր:

— Ի՞նչո՞ւ ես այդպէս խօսում, Կատիւշա: Չէ որ ես քեզ  
ճանաշում եմ, յիշում եմ, թէ ինչպէս էիր այն ժամանակ Պա-  
նօվում...

Բայց Մասլօվան տեղի չէր տալիս, չէր ուզում տեղի տալ:

— Զարծի հին դարմանը քամու տալ, — աւելի ևս կնճռուե-  
լով, ասաց նա չորչոր:

— Ես հին յիշում եմ, որ քաւեմ մեղքաւ Կատիւշա, — ոկուց  
նա և ուզում էր ասել, որ ինքը կը պսակուի նրա հետ, բայց  
այդ բռպէին հանդիպեց նրա հայեացքին ու այնպիսի մի սար-  
սափելի ու կոպիտ, այնպիսի հակակրական բան կարդաց այդ  
հայեացքի մէջ, որ չը կարողացաւ խօսքը լրացնել:

Այդ միջոցին այցելուները սկսեցին դուրս գալ: Բանտա-  
պետը մօտեցաւ Նեխլիւդօվին և ասաց, որ տեսակցութեան ժա-  
մանակը վերջացել է: Մասլօվան վեր կացաւ ու հլու կերպով  
սպասում էր, թէ երբ բաց կը թողնեն իրան:

— Մնաք բարե, զեռ շատ բան ունեմ ձեզ ասելու, բայց,  
ինչպէս տեսնում էք, այժմ անկարելի է, — ասաց Նեխլիւդօվը  
ու մնիսեց ձեռքը դէպի նա: — Ես էլի կը գամ...

— Կարծեմ, ինչ որ կար ասացիք...

Ասաց Մասլօվան ու ձեռք տուեց նրան, բայց առանց սըդ-  
մելու:

— Զէ, ես կ'աշխատեմ էլի տեսնուել ձեզ հետ այնպիսի տե-

գում, ուր կարելի լինի կարգին խօսել, և այն ժամանակ կ'ասեմ ձեզ մի շատ կարեռ բան, որ պէտք է յայտնել ձեզ,—ասաց Նեխմիւդօվը:

—Որ ուզում էք, եկէք,—ասաց Մասլօվան, այնպէս ժըպտալով, ինչպէս ժպտում էր այն տղամարդկանց, որոնց ուզում էր դուր գալ:

—Դուք քրոջիցս էլ աւելի էք ինձ համար,—ասաց Նեխմիւդօվը:

—Զարմացք բան է,—լրկնեց Մասլօվան և, գլուխը թափալով, զնաց ցանցապատի այն կողմը:

### XLII

Նեխմիւդօվը սպասում էր, որ, հէնց առաջին տեսակցութեան ժամանակ, Կատիւշան, տեսնելով նրան և իմանալով, որ զղացել է ու ուզում է օգնել իրան, իսկայն կ'ուրախանայ, կը խանդաղատուի և նորից առաջուան Կատիւշան կը զառնայ, բայց սարսափով տեսաւ, որ իր առջեր կատիւշան չէ, այլ միայն Մասլօվան: Այդ զարմացրեց և սարսափեցրեց նրան:

Ամենից աւելի զարմացնում էր նրան այն, որ Մասլօվան ոչ միայն չէր ամաշում իր վիճակից,—ոչ թէ կալանաւորուհի լինելուց (այդ բանից նա ամաշում էր), այլ նրանից, որ հասարակաց կին էր,—բայց նոյն իսկ կարծես գոհ էր այդ վիճակից ու գրեթէ պարծենում էր նրանով, Եւ սակայն ուրիշ կերպ չէր էլ կարող լինել: Ամեն մարդ, որպէս զի մի բան անի, պէտք է իր արածը կարեռ ու կարգին բան համարի: Ուստի, ինչպիսի վիճակ էլ ունենայ մարդ, նա անպատճառ այնպիսի հայեացք կը կազմի մարդկային կեանքի մասին ընդհանրապէս, որով նրա գործունէութիւնը կարեռ ու կարգին կը թուի իրան:

Առհասարակ մարդիկ կարծում են, թէ գողը, մարդասալանը, հասարակաց կինը, վատ համարելով իրանց արածը, պէտք է ամօթ զգան նրանից: Իսկ իրաք բոլորովին հակառակն է տեղի ունենում: Ճակատագրով և իրանց մեղք ու սիսալանքներով ուրոշ դրութեան մէջ ընկած մարդիկ, որքան էլ անկանոն լինի նա, այնպիսի հայեացք են կազմում կեանքի վրայ առհասարակ, որով իրանց դրութիւնը կարգին ու յարգելի է թւում իրանց: Իսկ որպէս զի այդ կարծիքին հաստատ մնան, մարդիկ բնազդորէն յարաբերութիւն են պահպանում միայն այնպիսի շրջանի հետ, որ նոյնպիսի հայեացք ունի կեանքի մասին և այն տեղի մասին, որ նրանք գրաւում են կեանքի մէջ: Մեզ զարմացնում է այդ բանը, երբ հարցը վերաբերում է իրանց ճարպիկութեամբ պար-

ծեցող գողերին, իրանց անսառակութեամբ պարծեցող հասարակց կանանց, կամ իրանց անդթութեամբ պարծեցող մարդասպաններին։ Բայց այդ մեզ զարմացնում է միայն այն պատճառով, որ այդ մարդկանց շրջանը շատ սահմանափակ է և, որ զվարացն է, այն պատճառով, որ մենք այդ շրջանից դուրս ենք գտնուում, սակայն միթէ նոյն երևոյթը չէ, որ տեղի է ունենում, երբ հարստաները պարծենում են իրանց հարստութեամբ և զօրապետները իրանց յաղթանակներով։ Մենք չենք նկատում, որ այդ մարդիկ խեղաթիւր հայեացքներ ունեն կեանքի և չար ու բարի մասին, միայն այն պատճառով, որ այդպիսի հայեացքներ ունեցող մարդկանց շրջանը աւելի մեծ է և մենք ինքներս էլ պատկանում ենք նոյն շրջանին։

Այդպիսի հայեացք էր կազմել իր կեանքի և աշխարհիս երեսին իր գրաւած տեղի մասին նաև Մասլօվան, նա տաժանակիր աշխատանքների դատապարտուած հասարակց կին էր, բայց, չը նայելով դրան, այնպիսի աշխարհայեացք էր կազմել իր համար, որ թոյլ էր տալիս նրան հաւանել ինքն իրան և նոյն իսկ պարծենալ ուրիշների առաջ իր գրութեամբ։

Այդ աշխարհայեացքը կայանում էր նրանում, որ առանց բացառութեան բոլոր տղամարդկանց համար, —թէ ծեր ու երիտասարդ, թէ գիննազիստ ու գեներալ, թէ կրթուած ու անկիրթ, —ամենազլիսաւոր բարիքը գրաւիչ կանանց հետ յարաբերութիւն ունենալն է, ուստի և բոլոր տղամարդիկ, թէն ցոյց են տալիս, թէ ուրիշ գործերով են գրաղուած, բայց իսկապէս միմիայն այդ բանին են ձգուում իսկ ինքը մի գրաւիչ կին է, որ կարող է բաւարարութիւն տալ կամ չը տալ տղամարդկանց այդ ցանկութեան, ուստի և անկասկած կարեւոր ու հարկաւոր մարդ է։ Նրա ամբողջ թէ անցեալ և թէ ներկայ կեանքը հաստատում էր այդ հայեացքը։

Տաս տարուայ ընթացքում և առեն տեղ, ուր որ եղել էր, նա տեսել էր, որ բոլոր տղամարդիկ, սկսած նեխլիւդօվից ու ծերունի ստանօվից և վերջացրած բանտային վերակացուներով, կարիք ունին իրանից, և չէր տեսել, չէր նկատել այնպիսի տղամարդիկ, որոնք կարիք չունենային իրանից։ Ուստի և ամբողջ աշխարհը նա երևակայում էր իբրև մի համախմբումն կրթով բորբագուած մարդկանց, որոնք ամեն կողմից աչք են սրել իր վրայ և ամեն տեսակ միջոցներով —իարէութեամբ, բանութեամբ, փողով կամ խորամանկութեամբ —աշխատում են տիրանալ իրան։

Այդպէս էր հասկանում կեանքը Մասլօվան և այդ հայեացքով դուրս էր գալիս, որ ինքը ոչ թէ ամենայեալին մարդն է,

այլ ընդհակառակը մի շատ կարևոր անձնաւորութիւն։ Եւ Մաս-  
լօվայի աշքում չը կար ուրիշ բան, որ այնքան գնահատելի լի-  
նէր, որքան այդ հայեացքը, և պատճեն չէր էր կարող լինել,  
որովհետեւ եթէ նա փոխէր իր այդ հայեացքը, կը կորցնէր այն  
նշանակութիւնը, որ այդ հայեացքի համաձայն նա ունէր մարդ-  
կանց մէջ։ Եւ որպէս զի չը կորցնէր իր այդ նշանակութիւնը,  
նա բնազդաբար փարում էր այն մարդկանց շրջանին, որոնք  
նոյնպիսի հայեացք ունէին կեանքի վրայ։ Ուստի և զգալով, որ  
Նեխլիւդովը ուզում է հանել նրան այդ շրջանից ու տանել ու-  
րիշ աշխարհ, նա դիմադրում էր նրան, նախատեսելով, որ այն  
աշխարհում, ուր ուզում էր նա տանել իրան, ինքը կորցնելու է  
կեանքի մէջ իր գրաւած տեղը, որ վստահութիւն և ինքնայարգու-  
մըն էր Ներշնչում իրան։ Նոյն պատճառով էր, որ նա հեռու էր  
քշում իրանից այն յիշողութիւնները, որոնք վերաբերում էին իր  
պատանեկական տարիններին և Նեխլիւդովի հետ ունեցած յարաբե-  
րութիւնների սկզբի շրջանին։ Այդ յիշատակները չէին համա-  
պատասխանում նրա այժմեան աշխարհայեացքին, ուստի և նա  
բոլորովին ջնջել էր նրանց իր յիշողութիւնից կամ, աւելի ծիշտ  
ասած, պահում էր նրանց անձեռնամիսելի կերպով յիշողութեան  
խորքերում, բայց այնպէս փակել, ծեփել էր նրանց, որ ոչ մի  
անցք չէր մնացել, ինչպէս մեղունները ծեփում են մեղրացեցերի  
բները, որոնք (մեղրացեցերը) կարող են փազնել մեղունների ամ-  
բողջ աշխատանքը։ Այդ պատճառով էլ այժմեան Նեխլիւդովը նրա  
աշքում այն մարդը չէր, որին նա երբեմն սիրում էր անարատ  
սիրով, այլ լոկ մի հարուստ պարոն, որից կարելի է և պէտք է  
օգուտ քաղել և որի հետ կարելի էր ունենալ միայն այնպիսի  
յարաբերութիւններ, ինչպէս և միւս բոլոր տղամարդկանց հետ։  
«Զէ, չը կարողացայ ասել նրան այն, ինչ որ ամենազլիսա-  
ւորն էր, — մտածում էր Նեխլիւդովը, այցելունների բազմութեան  
հետ դիմելով գէպի բանտի դուրը։ — Ես չասացի, նրան, որ  
պակուելու եմ հետո։ Չասացի, բայց կանեմ, մտածեց նա։  
Կերակացուները, դոների մօտ կանգնած, բաց էին թող-  
նում այցելուններին, երկու հոգով հաշուելով նրանց, որպէս զի  
ոչ մի աւելորդ մարդ դուրս չը գար բանտից կամ մնար բան-  
տում։ Այժմ էլ հաշուելիս խիեցին Նեխլիւդովի մէջքին, բայց  
այժմ այդ ոչ միայն չը վիրաւորեց նրան, այլ և նոյն իսկ նա չը  
նկատեց այդ բանը։

XLIII

Նեխլիւդովը ուզում էր փոխել իր կենցաղավարութեան

ձեր, — վարձով տալ ընդարձակ բնակարանը, արձակել ծառաներին ու տեղափոխուել հիւրանոց, Բայց Ազգաֆենս Պետրօվնան ապացուցեց նրան, որ ոչ մի հիմք չը կար, որպէս զի նա փոխէր կենցաղավարութիւնը մինչև ձմեռ. ամառը ոչ ոք չէր վարձի բնակարանը, իսկ ապրելու և կանկարատիքն ու իրեղէնները պահելու համար միմնոյնն է մի որ և է տեղ պէտք էր նրան. Այնպէս որ իզուր անցան Նեխիլւդօվի բոլոր ջանքերը փոփոխելու իր կենցաղավարութեան ձեր (նա ուզում էր ապրել պարզ երկպով, ուսանողի պէս). Ոչ միայն ամեն ինչ անփոփոխ մնաց, այլ և ահագին իրարանցում սկսուեց տան մէջ, — բակապանը, նրա օգնականը, խոհարարուհին ու Կօրնէյը սկսեցին հովին տալ, փըռտել ու թափ տալ հաղար ու մի տեսակ բրդէ ու մօրթէ իրեղէններ, Սկզբում դուրս էին բերում ու չուռանների վրայ փոռում ինչ որ շքազգեսաններ ու տարօրինակ մորթեղէններ, որ երբէք ոչ ոք չէր գործածում. յետոյ սկսեցին դուրս կրել գորդերն ու կանկարատինները, և բակապանն ու իր օգնականը, մկանու կըռաները քշտած, ուժգին ու կանոնաւոր բաղխումով թափ էին տալիս այդ իրեղէնները, ու բոլոր սենեկներում նաւթալինի հոտ կանգնեց, Բակովն անցնելիս և պատուհաններից նայելիս, Նեխիլւդօվիք զարմանք էր զգում, թէ ինչ սարսափելի շատ են այդ բանները և որքան անկասկած կերպով անօգուտ են նրանք: «Եյդ իրերի միակ գործադրութիւնը և նշանակութիւնը, — մտածում էր Նեխիլւդօվը, — կայանում է նրանում, որ մարմնամարզական շարժումներ անելու առիթ տան Ազգաֆենս Պետրօվնային, Կօրնէյին, բակապանին, նրա օդնականին ու խոհարարուհուն»:

«Զարժէ այժմ փոխել կենցաղավարութեանս ձեր, քանի որ Մասլօվյի գործը դեռ չէ վճռուած, — մտածում էր Նեխիլւդօվը: — Վերջապէս, շատ դժուար բան է այդ. Միմնոյնն է, ինքն ըստ ինքեան ամեն ինչ կը փոխուի, երբ նրան ազտաեն կամ թէ քշեն Սիրիք ու ես էլ հետը գնամ»:

Ֆանարին փաստաբանի նշանակած օրը Նեխիլւդօվը գնաց նրա մօտ Մանելով նրա սեփական տան հոյակապ բնակարանը, որ զարդարուած էր ահագին տունկերով ու պատուհանների զարմանալի վարագոյններով և առհասարակ այն թանկագին կահաւորութեամբ, որ ապացոյց է շմարանայ ձեռք ընկած, այսինքն առանց աշխատանքի ստացած փողերի և պատահում է միայն անակնկալ կերպով հարստացած մարդկանց տներում, — Նեխիլւդօվը ընդունաբանում հանդիպեց հերթ սպասող իննդրաւորների, որոնք, ինչպէս քիչեկների ընդունաբանում, վհատ-վհատ շարուել էին՝ նրանց զբաղեցնելու համար նշանակուած պատկերազարդ հանդէսներով ծանրաբեռնուած սեղանների շուրջը:

Փաստաբանի օգնականը, որ նստած էր նոյն սենեակում մի բարձր ու թեք գրասեղանի առաջ, Նեխիլիդովին ճանաչելով, մօտեցաւ նրան, բարևեց ու ասաց, որ ինքը իսկոյն կը յայտնի փաստաբանին: Բայց մինչև դրան մօտենալը, դուռը բացուեց և երևացին ինքը ֆանարինը ու մի բոլորովին նոր հագուստով, կարմրած երեսով և խիտ բեխերով կարձահասակ, թիկնաւէտ ու բաւական տարիքոտ պարոն: Նրանք բարձրածայն ու տաք-տաք խօսում էին և երկուան էլ այնպիսի դէմքի արտայայտութիւն ունէին, ինչպէս ունենում են այն մարդիկ, որոնք մի բոպէ առաջ մի ձեռնտու, բայց ոչ բոլորովին կարգին գործ են արել: —Ինքներդ էք մեղաւոր, եղբայր,—ժպտալով ասում էր ֆանարինը:

—Մեղաւորին ով ա տուե արքայութիւն:

—Լաւ, լաւ, զիտենք:

Եւ երկուան էլ անբնական կերպով ծիծաղեցին:

—Ախ, դուք էք, իշխան, համեցէք,—ասաց ֆանարինը, տեսնելով Նեխիլիդովին, ու մի անգամ էլ գլուխ տալով հեռացող վաճառականին, Ներս տարաւ Նեխիլիդովին իր առանձնասենեակը, որ կահաւորուած էր խիստ ոճով:—Խնդրեմ, ծիսեցէք,—ասաց փաստաբանը, նստելով Նեխիլիդովի գիմացը և զսպելով նախընթաց գործի աջողութիւնից առաջացող ժպիտը:

—Շնորհակալ եմ: Ես եկել եմ Մալովայի գործի համար:

—Այս, այս, այս րոպէիս: Ախ, ինչ անպիտաններն են այդ հաստաքսակները,—ասաց նա:—Տեսաք հոգիորին. մօտ 12 միլիոն կարողութիւն ունի, բայց էլի «ով ա տուե» է ասում: Որ իմանայ, թէ կարող է մի 25—մանէթանոց պոկել ձեզնից, ատամներովը դուրս կը քաշի:

—Նա ասում է «ով ա տուե», իսկ դու ասում ես «25-մանէթանոց»,—մտածում էր մինչ այդ Նեխիլիդովը, անզուսազ զգուանք զգալով դէպի այդ պոտկերես մարդը, որ իր խօսելու եղանակով ուզում էր ցոյց տալ: Թէ ինքն ու Նեխիլիդովը մի բանակի մարդիկ են, իսկ եկած գործատէրերն ու միւսները՝ ուրիշ բանակի:

—Հոգիս բերանս բերեց, սարսափելի լիրը արարած է, Մի քիչ հանգստացայ ձեզ հետ խօսելով,—ասաց փաստաբանը, կարծես արդարացներով իրան, որ գործի մասին չէ խօսում: —Դէ այժմ անցնենք ձեր գործին... Ուշագրութեամբ կարդացի և քրովանդակութեանը հաւան չը կացայ, ինչպէս ասուած է Տուրքենեվի գրուածքներից մէկում, այսինքն՝ անպէտք փաստաբան է եղել և վճռաշինչ գանգատ տալու բոլոր առիթները ձեռքից բաց է թողել:

— Ուրեմն ինչ էք վճռել:

— Այս բոպէիս, Ասացէք նրան,—դիմեց նա ներս եկած օգնականին,—որ ինչպէս ասացի, այնպէս էլ կը լինի. կարող է՝ լաւ, չի կարող՝ պէտք չի:

— Ասում է, որ համաձայն չի:

— Ուրեմն պէտք չի,—ասաց փաստաբանը և նրա ուրախ ու հեշտահոգի դէմքը յանկարծ մոայլ ու չար արտայայտութիւն ստացաւ:

— Այ, ասում են, թէ փաստաբանները առանց մատի խիելու հանգին փողեր են ստանում,—ասաց նա նորից ախորժելի կերպարանք տալով դէմքին:—Մի մանկա պարտապանի ազատեցի բոլորովին անհիմ մեղադրանքից, հիմի բոլոր մանակները վագում են ինձ մօտ: Իսկ ամեն մի այդպիսի գործ ահազին աշխատանք է պահանջում: Մենք էլ, գրողներից մէկի ասածի պէս, ամեն անդամ մի կտոր միս ենք թողնում թանաքամանի մէջ: Հա, ինչպէս ասացի, ձեր գործը կամ այն գործը, որ ձեզ հետաքրքրում է,—շարունակեց նա, —շատ վատ է տարուած, վճռաբեկ գանգատի համար կարգին առիթներ չը կան, բայց այսուամենայնիւ կարելի է փորձել բեկանել տալ վճիռը, և ահա ես գրեցի գանգատը հետեւալ ձեռվ:

Նա վերցրեց մի գրոտած թերթ և, արագ-արագ կուլ տալով մի քանի անհետաքրքիր ձևական խօսքեր և առանձնապէս աղդով կերպով արտասանելով մնացած խօսքերը, նա սկսեց կարդալ.

«Կառավարիչ Սենատի քրէական վճռաբեկ բաժանմունքին և այլն գանգատ Այս ինչ ժամանակ կայացրած վճռով և այլն այս ինչ Մասլօվան մեղաւոր է ճանաչուել Սմելկօվ վաճառականին թունաւորմամբ մահ պատճառելու մէջ և Քրէական Օրէնսդրի 1454 յօդուածի հիման վրայ դատապարտուել է և այլն տաժանակիր աշխատանքների և այլն»:

Նա կանգ առաւ, ակներիաբար,—չը նայելով այդ բանի շատ սովորական լինելուն, —գուարճութեամբ լսելով իր գրածը:

«Այդ վճրուը այն աստիճան կարենոր դատավարական միալների և օրինադանցութիւնների հետևանք է,—շարունակեց նա աղդու կերպով,—որ պէտք է բեկանուի: Նախ, դատական քըննութեան միջոցին Սմելկօվի փորոտիների հետազօտութեան արձանագրութիւնը կարդալիս նախագահը ընդհատեց ընթերցումը հէնց սկզբում»—այս մէկ:

— Բայց չէ որ մեղադրողն էր պահանջել այդ արձանագրութեան ընթերցումը, —զարմանալով ասաց Նեխլիւդօվը:

—Այդ միւնոյնն է, պաշտպանն էլ կարող էր հիմք ունենալ պահանջել նոյնը:

—Բայց այդ ոչ մի բանի պէտք չէր:

—Այսուամենայնիւ, այդ՝ առիթ է: Այսուհետեւ. «Երկրորդ, —շարունակեց նա կարգալ,—այն ժամանակ, երբ Մասլօվայի պաշտպանը իր ճառի մէջ, ցանկանալով բնորոշել Մասլօվայի անձնաւորութիւնը, չօշափեց նրա անկման ներքին պատճառերը, նախագահը կանգնեցրեց նրան այն հիման վրայ, իրը թէ պաշտպանի խօսքերը ուղղակի չեն վերաբերւում գործին, մինչդեռ քրէական գործերում, ինչպէս այդ քանիցս մատնացոյց է արել Սինատը, մեղադրեալի բնաւորութեան և առհասարակ բարոյական հութեան լուսաբանութիւնը առաջնակարգ նշանակութիւն ունի, թէ կուզ հէնց մեղադրեալի պատասխանաւուութեան ընդունակ թէ անընդունակ վիճակի մէջ գտնուած լինելու հարցը կանոնաւոր կերպով վճռելու համար», —այս էլ երկու, ասաց նա, նայելով նեխլիւդօվին:

—Բայց պաշտպանը այնքան վատ էր խօսում, որ ոչինչ չէր հասկացւում, —աւելի ևս զարմանալով, ասաց նեխլիւդօվը:

—Տուտուց փաստաբան է և, ի հարկէ, ոչ մի խելքը գլխին բան չէր կարողանալու ասել, —ծիծաղելով ասաց ֆանարինը, —բայց այնուամենայնիւ առիթ է: Հա, յետոյ, «Երրորդ», իր վերջնական ճառում նախագահը, Քր. Դատավար. կանոնագրքի 801 յօդուածի 1 կէտի դրական պահանջի հակառակ, չը բացատրեց երդուեալ ատենակալներին, թէ ինչ իրաւաբանական տարրերից է բաղկանում մեղադրութեան հասկացողութիւնը, և չասաց նըրանց, որ նրանք իրաւունք ունեն, ապացուցուած համարելով հանդերձ այն փաստը, որ Մասլօվան թոյն է տուել Սմելկօվին, այնուամենայնիւ չը մեղադրել նրան այդ բանի համար, որովհետեւ նա մտադրութիւն չի ունեցել սպանութիւն գործելու, և այդպիսով մեղաւոր ճանաչել նրան ոչ թէ քրէական եղեռնագործութեան մէջ, այլ հասարակ անզգուշութեան մէջ, որ, Մասլօվայի համար անսպասելի կերպով, առաջ է բերել վաճառականի մահը: Այս մէկը ամենից զիսաւորն է:

—Այդ մենք առանց նրա ասելուն էլ կարող էինք հասկանալ. այդ մեր սիսալն է:

«Եւ վերջապէս, չորրորդը, —շարունակեց փաստաբանը, —երդուեալ ատենակալները Մասլօվայի մեղաւորութեան հարցին այնպիսի ձեռվ են պատասխանել, որ իր մէջ ակնյայտնի հակառաւութիւն է պարունակում: Մասլօվան մեղադրուում էր այն բանի մէջ, որ նա դիտմամբ թունաւորել էր Սմելկօվին բացառապէս կողոպտելու նպատակով, որ և սպանութեան միակ շար-

ժառիթն էր համարւում, իսկ երդուեալ ատենակալները իրանց պատասխանի մէջ բացասում են կողոպտելու նպատակը և Մաս-լովայի մամնակցութիւնը գողութեան մէջ, որից ակնյայտնի ե-րեւում է, որ նրանք ուղղում են բացասել նաև սպանութեան դիտաւորեալ լինելը և միմիայն նախագահի եղբափակիչ ճառի թերատութիւնից առաջ եկած թիւրիմացութեան չնորհիւ՝ ինչ-պէս հարկն է չեն արտայայտել այդ բանը իրանց պատասխանի մէջ, ուստի և երդուեալների այդ պատասխանը անպայման կեր-պով անհրաժեշտ էր դարձնում Քր. Դատավար. Կանոնագրքի 816 և 808 յօդուածների գործադրութիւնը, այսինքն նախագա-հը պէտք է երդուեալ ատենակալներին բացատրէր իրանց արած սխալը և առաջարկէր նրանց նորից խորհրդակցել ու նոր պա-տասխան տալ ամբաստանեալի մեղաւորութեան հարցին», — կարդաց Ցանարինը:

— Հապա ինչո՞ւ նախագահը այդ բանը չարեց:

— Ես էլ շատ կ'ուզէի իմանալ, թէ ինչո՞ւ չի արել, — ասաց Ցանարինը ծիծադելով:

— Ուրեմն Սենատը կ'ուզզի սխալը:

— Այդ կախուած է նրանից, թէ ով կը լինի այնտեղ ատե-նակալ: Ուրեմն այդպէս, Այնուհետև գրում ենք հետևեալը. «այդ-պիսի մի պատասխան երդուեալների կողմից իրաւունք չէր տա-լիս դատարանին, — շարունակեց նա արագ-արագ, — ենթարկել Մամօվային քրէական պատի, և Քր. Դատավ. Կան. 771 յօդ. 3 կէտը նրա վերաբերմամբ գործ դնելը խիստ և խոշոր խախ-տումն է մեր քրէական դատավարութեան հիմնական սկզբունք-ների: Վերոյիշեալ հիմքերով պատիւ ունեմ խնդրելու և այն և այլն, Քր. Դատավ. Կան. 909, 910, 912 կ. 2. և 928 յօդ. հա-մաձայն, բեկանել և այլն և այլն և յանձնել այս գործը նորից քննելու նոյն դատարանի մի ուրիշ բաժանմունքից: Այսպէս ու-րեմն, այն ամենը, ինչ որ կարելի էր անել, արուած է: Բայց պէտք է անկեղծօրէն ասեմ ձեզ, որ յաջողութեան քիչ յոյս կայ: Սակայն, ամեն ինչ կախուած է Սենատի բաժանմունքի կազ-մից: Եթէ մարդ ունեք այնտեղ, աշխատեցէք:

— Մէկ-երկու ծանօթ ունեմ:

— Եւ որքան կարելի է շտապեցէք, թէ չէ բոլորն էլ կը ցրուեն զանազան տեղեր իրանց հէմօրօյը բժշկելու և պէտք կը լինի երեք ամիս սպասել... իսկ եթէ այդտեղ անյաջող ան-ցնի, մնում է մի միջոց, այն է՝ խնդիրք տալ Բարձրագոյն ա-նունավ: Այդ դէպքում էլ պատրաստ եմ առաջարկել ձեզ իմ ծառայութիւնը ինսդիրքը գրելու համար:

— Շնորհակալ եմ, իսկ վարձատրութիւնը:

— Օգնականս կը յանձնի ձեզ գանգատի պարզագրութիւնը  
ու կ'ասի ինչ որ պէտք է:

— Մի բան էլ էի ուզում հարցնել ձեզնից. դատախազը  
թոյլտութեան թուղթ տուեց ինձ այն կնոջը տեսնելու, բայց  
բանտում ինձ ասացին, որ բայցի այդ պէտք է թոյլտութիւն  
ստանալ նահանգապետից, որպէս զի իրաւունք ունենամ տես-  
նուել հետը որոշեալ օրերից ու սենեակից դուրս։ Հարկաւոր է  
արդեօք այդ։

— Կարծում եմ, որ հարկաւոր է։ Բայց այժմ նահանգա-  
պետը այստեղ չի, և նրա պաշտօնը փոխն է կատարում։ Բայց  
այդ այնպիսի յիմար մարդ է, որ դժուար թէ մի բան կարողա-  
նաք անել հետը։

— Մասիննիկօվը չի փոխահանգապետը..?

— Այո։

— Ես ճանաչում եմ նրան, — ասաց Նեխիւդօվը ու վեր կա-  
ցաւ, որ գնայ։

Այդ ժամանակ վազէվազ ներս պրծաւ սենեակը մի փոք-  
րիկ, սարսափելի անձոռնի, տափակաքիթ և ոսկրոտ ու դեղնա-  
ւուն կին, փաստաբանի կինը, որ, ակներեաբար, ամեննեին չէր  
վհատում իր անձոռնութեան պատճառով, այլ ընդհակառակը  
չափից դուրս տարօրինակ զուգուած էր, — ինչ որ թաւիչէ ու  
մետաքսէ վառ դեղնագոյն ու կանաչ բան ունէր հազին, — ու  
ցանցառ մազերը խուճուճ դրած։ Նա յաղթական կերպարանք  
ունէր, երբ ներս պրծաւ ամուսնու առանձնասենեակը մի հողի  
գոյն դէմքով, մետաքսապատ օձիքաւոր սիւրտուկով ու սպիտակ  
փողպատով երկարահասակ ու ժպտուն պարզնի հետ։ Մի գրող  
էր այդ պարոնը, որին դէմքով ճանաչում էր Նեխիւդօվը։

— Անատօլ, — ասաց տիկինը, բանալով դուռը, — գնանք ինձ  
մօտ։ Ահա Անմեօն իվանօվիչը խոստանում է կարդալ իր ո-  
տանաւորը, իսկ դու պէտք է անպատճառ կարդաս Գարշինի  
մասին։

Նեխիւդօվը ուզում էր դուրս գնալ, բայց փաստաբանի  
կինը փափսաց մարդու հետ ու անմիջապէս դիմեց նրան։

— Խնդրեմ, իշխան, ես ձեզ ճանաչում եմ և աւելորդ եմ  
համարում, որ ձեզ ներկայացնեն ինձ, — համեցէք մեր գրական  
ցերեկոյթին։ Շատ հետաքրքիր է լինելու։ Անատօլը հիանալի է  
կարդում։

— Տեսնում էք, որքան բազմատեսակ զբաղմունքներ ու-  
նեմ, — ասաց Անատօլը, ձեռքերը չոելով, ժպտալով և ցոյց տա-  
լով կնոջ վրայ, արտայայտելով այդ շարժումով, թէ անկարելի  
է հակառակել այդպիսի հմայիչ անձնաւորութեան։

Տիուր ու խիստ դէմքով և ամենամեծ քաղաքավարութեամբ չորհակալութիւն յայտնելով փաստաբանի կնոջը այդ պատուի համար, Նեխիլիւգովը հրաժարուեց հրաւէրից, ասելով, որ չէ կարող մնալ, և դուրս եկաւ ընդունաբանը:

—Ի՞նչ քրքրուանն է, —ասաց նրա մասին փաստաբանի կինը, երբ նա դուրս գնաց:

Ընդունաբանում օգնականը յանձնեց Նեխիլիւգովին պատրաստ խնդիրը և վարձատրութեան վերաբերեալ հարցմունքին պատասխանեց, որ Անատոլիյ Սեմեօնօվիչը 1,000 ռուբլի է նշանակել, ու աւելցրեց, թէ Անատոլիյ Սեմեօնօվիչը առհասարակ այդպիսի գործեր չի վերցնում և միայն նրա համար է համաձայնել գրել:

—Ի՞նչպէս պէտք է ստորագրել խնդիրքին, ով է ստորագրելու, —հարցրեց Նեխիլիւգովը:

—Ի՞նքը մեղադրեալը կարող է, իսկ եթէ նրա համար դժուար է, կարող է հաւատարմաթուղթ տալ և Անատոլիյ Սեմեօնօվիչը կը ստորագրի:

—Զէ, կերթամ բանուը և իրան ստորագրել կը տամ, —ասաց Նեխիլիւգովը, ուրախանալով, որ առիթ ունի որոշած օրից շուտ տեսնել կատիւշային:

#### XLIV

Սովորական ժամին բանտի միջանցքներում հնչեցին վերակացուների սուլոցները, ճռչալէն բացուեցին միջանցքների ու սենեակների գմները, թփիթփացին բռնիկ ոտներ ու բանտային հողաթափների կրունկները, միջանցքներով անցան աղբաթափները, լցնելով օգը գարշելի հոտով. կալանաւորներն ու կալանաւորուհիները լուսցուեցին, հագնուեցին ու դուրս եկան միջանցքները ստուգման համար, իսկ ստուգումից յետոյ գնացին եռման ջուր վերցնելու թէյի համար:

Թէյի ժամանակ բանտի բոլոր սենեակներում տաք-տաք խօսում էին այն բանի մասին, որ այդ օրը երկու կալանաւորի պէտք է պատժէին ճիպոտներով ծեծելով: Այդ կալանաւորներից մէկը մի կարգին գրագէտ երիտասարդ էր, Վասիլիեվ անունով մի գործակատար, որ սաստիկ խանդոտութեան բոպէին սպանել էր իր սիրուհուն: Նրա սենեակացներները սիրում էին նրան, որովհետեւ ուրախ տղայ էր, բաց ձեռք ունէր և գլուխ չէր ծոռում իշխանաւորների առաջ: Նա տեղեակ էր օրէնքներից և պահանջում էր, որ նրանք պահպանեն օրէնքը: Այդ պատճառով բանտային իշխանութիւնը չէր սիրում նրան: Երեք շաբաթ ա-

ուաջ վերակացուն ապտակ էր տուել աղբաթափներից մէկին ոյն բանի համար, որ նա կեղատաջուր էր թափել նրա նոր համագդեստի վրայ, Վասիլիկեվը պաշտպան էր հանդիսացել աղբաթափին, ասելով, որ օրէնքում չը կայ, թէ կարելի է ծեծել կալանաւորներին: «Ես քեզ օրէնք ցոյց կը տամ», — ասել էր վերակացուն ու հայհոյել Վասիլիկեվին: Վասիլիկեվը խօսքի տակը չէր մնացել Վերակացուն ուզել էր խփել նրան, բայց Վասիլիկեվը բանել էր նրա ձեռքերից, պահել էր այդպէս մի երկք բոպէ, յետոյ շուռ տուել ու դուրս գցել դռնով: Վերակացուն գանգատուել էր, և բանտապեալ հրամայել էր կարցէր գցել Վասիլիկեվին:

Կարցէրները մի շարք մութ նկուղներ էին, որոնք դրսեւից կողպւում էին նիգերով: Խաւար ու ցուրտ կարցէրում չը կար ոչ մահճակալ, ոչ սեղան, ոչ էլ աթոռ, այնպէս որ պատժուածը կամ պառկում էր կեղտոտ յատակի վրայ, ուր նրա վրայովը ցատկուում ու վազվզում էին առնէտներ, որոնք չափազանց շատ էին կարցէրներում և այնքան համարձակ, որ մթութեան մէջ անկարելի էր լինում պահել նրանցից հացը: Նրանք ուտում էին հացը կարցէրաւորների ձեռքի տակից և նոյն իսկ յարձակուում էին նրանց վրայ, եթէ նրանք դադարում էին իրար գալուց: Վասիլիկեվը ասել էր, որ կարցէր չի գնալ, որովհետև մեղաւոր չէ: Այն ժամանակ բանի էին տարել նրան և սկսել էր պաշտպանուել և երկու կալանաւորներ օգնել էին նրան դուրս պրծնելու վերակացուների ձեռքից: Բոլոր վերակացուները հաւաքուել էին և, ի միջի այլոց, նաև իր ոյժով հոչակաւոր Պետրօվը: Կալանաւորներին հուպ էին տուել ու խցկել կարցէրները: Իսկոյն և եթ իմաց էին տուել նահանգապետին, թէ բանտում խռովութեան նման մի բան էր պատահել, թուլդ էր ատացուել, որով հրամայում էր ճիպոտով 30 հարուած տալ երկու գլխաւոր յանցաւորներին — Վասիլիկեվին և նեպօմեաչչի թափառաշրջիկին:

Պատիքը պէտք է տրուէր կանանց այցելարանում:

Երեկոյից այդ յայտնի էր բանտի բոլոր բնակիչներին, և սենեկներում տաք-տաք խօսում էին առաջիկայ պատժի մասին:

Կօրաբկեօվան, Խօրօշավկան, Ձեղօսեան ու Մասլօվան նստած էին իրանց անկիւնում և օղին խմելուց յետոյ, որ այժմ այլ ևս չէր պրծնում Մասլօվայի մօտ և որով նա առատ-առատ հիւրասիրում էր իր ընկերուէներին, կարմրած ու տաքացած՝ թէյ էին խմում ու խօսում նոյն բանի մասին:

— նա հօ աղմուկ չի արել կամ թէ մի ուրիշ վատ բան, —

ասում էր Կօրաբլեօվան Վասիլիեվի մասին, շաքարից մանր կտորներ կրծոտելով իր պինդ տառմներով:—Նա միայն ընկերոջն էր պաշտպանում: Որովհետև այժմ իրաւունք չը կայ ծեծելու:

—Ասում են լաւ տղայ է,—վրայ բերեց երկարահիւս Ֆեդոսեան, որ գլուխաց նստած էր մի ցախի կտորի վրայ, այն տախտի դիմացը, որի վրայ դրուած էր թէյամանը:

—Լաւ կը լինէր նրան ասէիր, Միխայլօվսա,—դիմեց պահապանուհին Մասլովային, ակնարկելով նեխիւլովին:

—Կ'ասեմ: Նա ամեն բան կ'անի ինձ համար,—ասաց Մասլովան, ժպտալով ու զլուխը թափահարելով:

—Բայց ով գիտի նա երբ կը գայ, իսկ, ասում են, արդէն գնացել են նրանց դուրս բերելու, ասաց Ֆեդոսեան:—Սոսկալի բան է,—աւելցրեց նա, հոգոց հանելով:

—Ես մի օր տեսայ, թէ ինչպէս էին մի գիւղացու ծեծում շնական դիւանատանը: Սկեսրայրս գործով ուղարկեց ինձ տանուտէրի մօտ, գամ ինչ տեսնեմ,—մի երկար պատմութիւն սկսեց պահապանուհին:

Նրա պատմութիւնը ընդհատուեց վերին միջանցքում՝ լսուող խօսակցութեան ձայներով ու ոտնաձայնով:

Կանայք սուս կացան ու սկսեցին ականջ դնել:

—Քաշ են տալիս չները,—ասաց Խօրօշավկան:—Հոգին կը հանեն հիմա: Շատ ջիգր ունեն վրան վերակացուները, որովհետեւ հախներիցը գալիս է:

Վերեռում ամեն ինչ խաղաղուեց, և պահապանուհին շարունակեց իր պատմութիւր, թէ ինչպէս ինքը վախեցել էր շինական դիւանատանը, երբ այստեղի ցախտանը ծեծում էին գիւղացուն, և ինչպէս լողին փորն էր ընկեր իսկ Խօրօշավկան պատմեց, թէ ինչպէս էին մի անգամ մարակներով ծեծում Շչեգլովին ու նա ոչ մի ձայն-ժպտուն չէր հանում: Յետոյ Ֆեդոսեան հաւաքեց թէյը, և Կօրաբլեօվան ու պահապանուհին սկսեցին կար անել, իսկ Մասլովան, ծնկները գրկած, նստեց տախտի վրայ, տանջուելով սրտի տիսրութիւնից: Նա ուզում էր արդէն պառկել ու աչքերը խփել, երբ յանկարծ վերակացուհին կանչեց նրան, ասելով, որ այցելու է եկել նրա մօտ:

—Անպատճառ ասա մեր մասին,—ասում էր Մասլովային Մենչօվա պառաւը, մինչ նա ուզում էր զլխաշորը կիսով չափ պոկ եկած մնդիկով հայերու առաջ,—մենք չենք այրել, այլ ինքը՝ անաստուածն է կրակ տուել. մշակն էլ տեսել է. թող հարցնեն, նա հոգին չի սեացնի: Ասա թող Միխայիլին դուրս

կանչել տայի Միտրին ամեն բան կարգին ու տեղին կը պատմի նրան. թէ չէ այս ինչ արդարութիւն է. մեզ անմեղ տեղը փակել են այստեղ, իսկ նաև՝ անաստուածը ուրիշի կնոջ հետ սէր է անում ու գինեաներում քէֆ քաշում:

—Անօրէնութիւն է այդ, —հաստատեց Կօրարլեօվան:

—Կասեմ, անպատճառ կ'ասեմ, —պատախանեց Մասլօվան: —Ի՞նչ էք կարծում, լաւ չի լինի, որ մի քիչ էլ գցեմ համարձակ խօսելու համար, —աւելացրեց նա, աչքով անելով:

Կօրարլեօվան կէս գաւաթ օղի ածեց նրա համար: Նա քաշեց գլուխը և ամենալաւ տրամադրութեան մէջ, կրկնելով իր ասած «համարձակ խօսելու համար» բառերը և գլուխը տմտըմբացնելով ու ժպտալով, գնաց վերակացուհու յետեից:

## XLV

Նեխլիւդօվը վաղուց ի վեր սպասում էր նրան նախագաւթում:

Բանտը հասնելով, նա խիեց մուտքի դռան զանգը և տուեց օրապահ վերակացուին դատախազից ստացած թոյլտութեան թուղթը:

—Ո՞ւմ էք ուզում:

—Ուզում եմ տեսնել Մասլօվա կալանաւորուհուն:

—Այժմ չի կարելի, բանտապետը զբաղուած է:

—Գրասենեակում, —հարցրեց Նեխլիւդօվը:

—Ոչ, այստեղ, այցելաբանում, պատախանեց վերակացուն, ինչպէս թուաց Նեխլիւդօվին, շփոթուելով:

—Այսօր միթէ ընդունում են:

—Չէ, առանձին գործ կայ, —ասաց նա:

—Հապա ինչպէս տեսնեմ նրան:

—Այ, կը գան այստեղ, այն ժամանակ կ'ասէք: Սպասեցէք:

Այդ ժամանակ կողքի գոնից գուրս եկաւ շողշողուն երիդներով փայլուն, պաղպան դէմքով և թութունի ծխով համակուած բեմերով մի ֆէլդֆէրէլ, որ խիստ կերպով դիմեց վերակացուին:

—Ի՞նչու էք ներս թողել այստեղ..., Պէտք է գրասենեակը տանել...

—Ի՞նձ ասացին, որ բանտապետը այստեղ է, ասաց Նեխլիւդօվը, զարմանալով այն անհանգստութեան վրայ, որ նկատում էր նաև ֆէլդֆէրէլի մէջ:

Այդ ժամանակ նեքսեի գուրս բացուեց և ներս եկաւ Պետրօվը՝ քափ ու քրտինք կարած:

— Ել սկի չի մոռանայ, — ասաց նա, դիմելով Գէլդֆէրէլին:

Ֆէլդֆէրէլը աչքերով ցոյց տուեց Նեխլիւդօվի վրայ և Պետրօվը լուց, յօնքերը կիտեց ու դուրս գնաց յետեի դռնով:

«Ո՞վ չի մոռանալու: Ինչու բոլորն էլ այսպէս շփոթուած են: Ինչու ֆէլդֆէրէլը աչքով նշան արեց նրան», մտածում էր Նեխլիւդօվը:

— Զի կարելի այստեղ սպասել, համեցէք գրասենեակը, — նորից դիմեց Գէլդֆէրէլը Նեխլիւդօվին, և Նեխլիւդօվը արդէն ուզում էր գնալ, երբ յետեի դռնով ներս մտաւ բանտապետը, աւելի ևս շփոթուած, քան իր ստորապերեաները: Նա անընդհատ հոգոց էր քաշում: Նեխլիւդօվին տեսնելով, նա դիմեց վերակացուին:

— Ֆեդոտօվ, կանանց հինգերորդ սենեակից Մասլօվային դուրս բերէք գրասենեակը, — ասաց նա:

— Համեցէք, — դիմեց նա Նեխլիւդօվին:

Նրանք բարձրացան մի դիմ սանդուխով և մտան մի հատ պատուհան ունեցող մի փոքրիկ սենեակ, ուր դրուած էին մի գրասեղան և մի քանի աթոռներ: Բանտապետը նստեց:

— Շատ ծանր պարտականութիւն է մեր պարտականութիւնը, — ասաց նա դիմելով Նեխլիւդօվին և մի հաստ պապիրոս հանելով ծխախոտի ամանից:

— Ի՞նչպէս երեսում է, յոզնել էք, — ասաց Նեխլիւդօվը:

— Առհասարակ յոզնել եմ ծառայութիւնից, — շատ դժուար պարտականութիւններ են: Ուզում ես մարդու վիճակը թեթևացնել, բայց աւելի վատ է դուրս գալիս: զիշեր ցերեկ մտածում եմ, թէ ինչպէս դուրս պրծնեմ այստեղից: ծանր, շատ ծանր պարտականութիւններ են...

Նեխլիւդօվը չը գիտէր, թէ ինչումն էր զլխաւորապէս այդ պաշտօնի դժուարութիւնը իր խօսակցի համար, բայց նկատում էր, որ այսօր նա գտնելում է մի առանձին տեսակ, խղճահարութիւն զարթեցնող, վճատ ու յուսահատ տրամադրութեան մէջ:

— Սյո, ես էլ կարծում եմ, որ շատ ծանր են ձեր պարտականութիւնները, ասաց նա: — Բայց որ այդպէս է, ինչու էք կատարում այդ պարտականութիւնները:

— Ապրուսափ ուրիշ միջոց չունեմ, ընտանիքի տէր եմ:

— Բայց եթէ ծանր է ձեզ համար...

— Ի՞նչ արած, այն էլ պէտք է ասեմ ձեզ, որ էլի ուժին Ներածի չափ օգուտ եմ բերում, թեթևացնում եմ ինչ որ կարող եմ: Մի ուրիշը իմ տեղ բոլորովին ուրիշ կերպ կը վարուէր: Հեշտ է ասել, 2,000 հոգուց աւելի են և ինչ պտուղներ:

Պէտք է իմանալ վարուելու ձեզ: Ինչ էլ լինի՝ Աստուծու ստեղծած են, մարդու խեղճը գալիս է: Բայց սանձերը բաց թողնել էլ չի կարելի:

Բանտապետը սկսեց պատմել կալանաւորների մէջ վերջերը տեղի ունեցած մի կռուի մասին, որ վերջացել էր սպանութեամբ:

Պատմութիւնը ընդհատուեց Մասլօվայի գալովը, որ ներս մտաւ վերակացուի յետևից:

Նեխլիւդօվը տեսաւ նրան դռնում, երբ նա դեռ չէր տեսել բանտապետին: Դէմքը կարմրած էր: Նա ժիր-ժիր հետեւում էր վերակացուին և անդադար ժպտում էր, տմտմբացնելով զլուխը: Բանտապետին տեսնելով, նա վախուորած հայեացքը սենուց նրա վրայ, բայց իսկոյն և եթ սթափուեց և աշխոյժ ու ուրախ կերպով դիմեց Նեխլիւդօվին:

— Բարե ձեզ,—ասաց նա ծոր տալով, ժպտալով ու ոչ այնպէս, ինչպէս առաջին անգամ, այլ ուժով թափ տալով նրա ձեռքը:

— Ահա բերեցի ինդիրքը, որ ստորագրէք,—ասաց Նեխլիւդօվը, մի քիչ զարմացած այն աշխոյժ կերպարանքից, որով Մասլօվան այսօր հանդիպեց նրան:— Փաստաբանը ահա գրել է ինդիրքը, դուք պէտք է ստորագրէք ու յետոյ կ'ուղարկենք Պետերբուրգ:

— Ինչու չէ, կը ստորագրեմ: Ինչ ուզէք կ'անեմ,—ասաց նա, պշելով մի աչքը ու ժպտալով:

Նեխլիւդօվը համեց գրպանից մի ծալած թերթ ու մօտեցաւ սեղանին:

— Կարելի՞ է այստեղ ստորագրել,—հարցրեց Նեխլիւդօվը բանտապետից:

— Արի այստեղ նստիր,—ասաց բանտապետը Մասլօվային, ահա քեզ քրիչ: Գրել գիտեմ:

— Մի ժամանակ գիտէի,—ասաց նա և, ժպտալով ու ներքնազդեստն ու բաճկոնի թերը ուղղելով, նստեց սեղանի մօտ, անշնորհք կերպով բանեց գրիչը իր փոքրիկ ու եռանդուն ձեռքով և ծիծաղելով՝ յետ նայեց Նեխլիւդօվի վրայ:

Նեխլիւդօվը ցոյց տուեց, թէ ինչ պէտք է գրել և որտեղ: Ուշի ուշով թաթախելով ու թափ տալով գրիչը, նա ստորագրեց իր անունը:

— Ել ոչինչ պէտք չէ:— հարցրեց նա մէկ Նեխլիւդօվին նայելով, մէկ բանտապետին և վայր գնելով գրիչը մէկ թանաքամանի մէկ թղթի վրայ:

—Ես մի քիչ բան ունեմ ձեզ հետ խօսելու, —ասաց Նեխ-  
լիւդովը, գրիչը ձեռքիցը առնելով:

—Լաւ, ասացէք, —ասաց Մասլովան և յանկարծ լրջացաւ,  
կարծես թէ մտածմունքների մէջ ընկաւ կամ քունը սկսեց տա-  
նել:

Բանտապետը վեր կացաւ ու դուրս գնաց, և Նեխլիւդովը  
մնաց նրա հետ մենակ:

## XLVI

Մասլովային բերող վերակացուն, որ հրէական տիպի մարդ  
էր՝ սպիտակող ծնոտամիլուքով, նստեց պատուհանի վրայ, սե-  
ղանից հեռու: Նեխլիւդովի համար հասաւ վճռական րոպէն: Նա  
շարունակ կշտամբում էր ինքն իրան, որ առաջին տեսակցու-  
թեան ժամանակ չասաց Մասլովային այն, ինչ որ գլխաւորն  
էր, այսինքն, որ ինքն ուղում է պասկուել նրա հետ,  
և այժմ հաստատ վճռել էլ էր ասել նրան այդ: Մասլովան  
նստած էր սեղանի մի կողմում: Նեխլիւդովը նստեց նրա դէմու-  
դէմը միւս կողմում: Սենեակում լոյս էր, և Նեխլիւդովը առա-  
ջին անգամ պարզ տեսաւ նրա դէմքը մօտիկ տարածութիւնից  
ու նկատեց աչքերի և շրթունքների շուրջը եղող խորշոմները և  
աչքերի ուռածութիւնը: Եւ սկսեց աւելի ես խղճահարութիւն  
զգալ գէպի նա, քան առաջ:

Կոթնելով սեղանի վրայ այնպէս, որ իր ասածները չը  
կարողանայ լսել պատուհանում նստած վերակացուն, նա ասաց  
միմիայն Մասլովայի համար լսելի ձայնով.

—Եթէ այդ խնդիրից բան դուրս չը գայ, Թագաւորի ա-  
նունով խնդիրը կը տանք: Ինչ որ հնարաւոր բան կայ, կ'ա-  
նենք:

—Եյ եթէ առաջ մի լսւ փաստաբան լինէր... լընդհատեց  
նրա խօսքը Մասլովան: —Թէ չէ իմ պաշտպանը տուտուցների  
մէկն էր: Մի գլուխ կօմպլիմէնտաներ էր ասում ինձ, —ասաց նա  
ու ծիծաղեց: —Եթէ այն ժամանակ իմանային, որ ես ծանօթ եմ  
ձեղ հետ, ուրիշ բան կը լինէր: Թէ չէ կարծում են, թէ մենք  
բոլորս էլ գող ենք:

«Ի՞նչ տարօրինակ է սա այսօր», մտածեց Նեխլիւդովը և  
այն է ուղում էր շարունակել իր ասելիքը, որ նա նորից սկսեց  
խօսել:

—Ինչ էի ուղում ձեղ ասել: Մեզնում մի պառաւ կայ,  
ամենքի բերանը բաց է մնացել վրան: Հրաշալի պառաւ է, բայց  
արի տես որ զուր տեղը բանտ են զցել իրան էլ, տղին էլ.

ամենքն էլ գիտեն, որ նրանք անմեղ են, բայց նրանց մեղաւոր են դուրս բերել, թէ կրակ են զցել, և նստացրել են: Նա լսել էր, որ ես ձեզ հետ ծանօթ եմ,—ասաց Մասլօվան, պտտացնելով դլուխը ու նայելով նրա վրայ,—մէկ էլ տեսնեմ գալիս է մօտս ու ասում. ասա իրան, թող տղիս դուրս կանչի, նա ամեն բան կը պատմի: Մենչօվկեր են ասում նրանց: Հօը, կ'անէք, Այնպէս հրաշալի պառաւ է, գիտէք, իսկոյն երևում է, որ մեղք չունի: Աշխատեցէք նրանց համար, հոգիս,—ասաց նա, նայելով նրան և յետոյ աչքերը ցածացնելով ու ժպտալով:

—Շատ լաւ, կ'իմանամ ու ինչ որ պէտք է կ'անեմ,—ասաց Նեխլիւդովը, աւելի ու աւելի զարմանալով նրա համարձակութեան վրայ:—Բայց ես ուզում էի խօսել ձեզ հետ իմ գործի մասին: Յիշում էք, ինչ ասացի ձեզ այն ժամանակ, —հարցրեց նա:

—Շատ բան խօսեցիք, ի՞նչ ասացիք այն ժամանակ, —ասաց Մասլօվան, շարունակ ժպտալով և գլուխը շուռ տալով մէկ այս կողմը, մէկ այս կողմը:

—Ես ասացի, թէ եկել եմ ձեզ խնդրելու, որ ներէք ինձ: —Եհ ներելն ինչ է. ինչ պէտք է դուրս գայ ներելուց... աւելի լաւ է դուքք...

—Թէ ուզում եմ քաւել մեղքս, —շարունակեց Նեխլիւդովը, —և քաւել ոչ թէ խօսքով, այլ գործով: Ես վճռել եմ պսակուել ձեզ հետ:

Մասլօվայի դէմքի վրայ սարսափ երեաց յանկարծ: Նրա մի աչքերը սեռուեցին Նեխլիւդովի վրայ և նայում էին ու չէին նայում նրան:

—Այդ ինչացու է, —ասաց նա, զայրագին կնճռուելով: —Ես զգում եմ, որ Աստուծու առաջ պարտական եմ այդ անել:

—Ի՞նչ Աստուծու անուն էք տալիս: Բան էք ասում էլի. Աստուծած: Ի՞նչ Աստուծած: Թող այն ժամանակը յիշէիք Աստուծուն, —ասաց Մասլօվան ու, բերանը բաց արած, մնաց:

Նեխլիւդովը միայն այժմ զգաց, որ նրա բերնից օղիի սաստիկ հոտ է փշում, ու հասկացաւ նրա գրգռութեան պատճառը:

—Հանգստացէք, —ասաց նա:

—Հանգստանալու ոչինչ չունեմ: Կարծում ես, հարբած եմ, հա: Շատ էլ հարբած եմ, բայց գիտեմ, թէ ինչ եմ ասում, —յանկարծվրայ տուեց նա արագ-արագ ու ամրող դէմքը կասկարմիր կտրեց, —ես սիրիրական եմ, իսկ դու աղա ես, իշխան ես, ինչ

բան ունես ինձ հետ։ Դու գնա քո իշխանուհի օրիորդների մօտ,  
իսկ իմ գինը մի կարմիր տասնանոց է։

—Ի՞նչքան էլ խիստ լեզու բանացնես, էլի չես կարող այն  
ասել, ինչ որ ես ինքս եմ զգում, —կամաց ձայնով ասաց Նեխ-  
լիւդովը, ամբողջ մարմնով դողալով, —չես կարող երեակայել, թէ  
որ աստիճան ինձ մեղաւոր եմ զգում քո առաջ…

—Մեղաւոր եմ զգում… զայրոյթով նրա ձեն արեց Մասլօ-  
վան։ —Այն ժամանակ չէիր զգում, երբ հարիւր մանէթանոցը  
ճիստեցիր ձեռս, թէ առ, գնա, այս է գինդ…

—Գիտեմ, զիտեմ, բայց ինչ անեմ հիմա, —ասաց Նեխլւ-  
դովը։ —Այժմ ես վճռել եմ մենակ չը թողնեմ քեզ, —կրկնեց  
Նեխլիւդովը, —և ինչ որ ասացի կ'անեմ։

—Իսկ ես ասում եմ, որ չես անի, —ասաց Մասլօվան ու  
բարձր ձայնով ծիծաղեց։

—Կատիւշա, —սկսեց Նեխլիւդովը։

—Հեռացիր ինձանից, Ես սիրիրական եմ, իսկ դու՝ իշխան  
և քո տեղը չի այստեղ, —գոռաց Մասլօվան, դուրս քաշելով  
ձեռքը նրա ձեռքից ու բոլորավիմ կերպարանափոխուելով զայ-  
րոյթից։ —Դու ուզում ես հոգիդ փրկել իմ միջոցավ, —շարունա-  
կեց նա, շտափելով ասել այն բոլորը, ինչ որ բարձրացել էր  
նրա հոգու մէջ։ —Այս կեանքում դու զուարձանում էիր ինձնով,  
այն կեանքումն էլ ուզում ես փրկուել ինձնով։ Ստելի ես դու  
ինձ ոսից մինչև զլուխ, այդ ակնոցներովդ և ամբողջ այդ չաղ  
ու գարշելի դէմքովդ։ Գնա, գնա, հեռացիր, —գոռաց նա, եռան-  
դուն շրժումով ոսքի ցատկելով։

Վերակացուն մօտեցաւ նրանց։

—Ինչ ես խայտառակութիւն անում։ Միթէ կարելի է  
այդպէս…

—Թողէք, ինդըրեմ, —ասաց Նեխլիւդովը։

—Ուզում եմ, որ չափը ճանաչի, —ասաց վերակացուն։

—Չէ, սպասեցէք, ինդըրեմ, —ասաց Նեխլիւդովը։

Վերակացուն հեռացաւ պատուհանի մօտ։

Մասլօվան նորից նստեց, աչքերը կախ զցելով և պինդ սըղ-  
մելով փոքրիկ ձեռքերի խաչ գցած մատները։

Նեխլիւդովը կանգնած էր նրա գլխին ու չէր իմանում ինչ անի։

—Չես հաւատում ինձ, —ասաց նա։

—Այն որ ուզում էք պսակուել ինձ հետ, —ոչ մի ժամա-  
նակ չի լինի այդ։ Կը կախուեմ ու չեմ պսակուի։ Հասկացաք։

—Ես այնուամնայնիւ կը ծառայեմ քեզ։

—Այդ ձեր գործն է։ Միայն թէ ինձ ոչինչ պէտք չի ձեզ-  
նից։ Հաստատ բան եմ ասում ձեզ, —ասաց Մասլօվան։ —Ախ,

ինչու աշխ ժամանակ չը մեռայ, — աւելացրեց նա, ու սկսեց լալ  
աղեկառւր կերպով:

Նեխլիւդօվը չէր կարողանում խօսել. Մասլօվայի լացը  
նրա արտասուքն էլ բերեց:

Մասլօվան բարձրացրեց աչքերը, նայեց նրան, կարծես  
զարմացաւ ու սկսեց գլխաշորի ծայրով սրբել իր երեսի վրայով  
հոսող արտասուքները:

Վերակացուն նորից մօտեցաւ ու յիշեցրեց, որ բաժանուե-  
լու ժամանակն է: Մասլօվան վեր կացաւ:

— Դուք այժմ՝ գրգռուած էք: Եթէ կարելի եղաւ, վաղը  
կը գամի: Իսկ դուք մտածեցէք, — ասաց Նեխլիւդօվը:

Մասլօվան ոչինչ չը պատասխանեց ու, առանց նրա վրայ  
նայելու, դուրս գնաց վերակացուի յետեից:

— Դէ հիմա քէֆ արա, աղջի, — ասաց Կօրաբլօվան Մաս-  
լօվային, երբ նա վերադարձաւ իրանց սենեակը: — Երեսում է,  
թունդ է գրաւուել քեզնով. տես, քանի որ գեռ գալիս է, լաւ  
օգուտ քաղիր: Նա կ'ազատի քեզ: Հարուստ մարդիկ ամեն բան  
կարող են անել:

— Իսկ որ այդպէս է, — երգաձայն ասաց պահապանուհին:  
— Աղքատ մարդը որ ծովի մօտ գնայ, ծովը կը չորանայ, իսկ  
հարուստի սէրտը որ թռչունի կաթ էլ ուզի, ցանկութիւնը կը  
կատարուի: Մեզնում, հոգիս, մի յարգեսոր մարդ կար, ինչ ես  
կարծում՝ ինչ արեց...

— Է, իմ՝ գործի համար խօսեցիր, — հարցրեց պառաւը:  
Բայց Մասլօվան ոչ մի պատասխան չը տուեց իր ընկե-  
րուհիներին, այլ պառկեց տախտի վրայ և շիլ աչքերը սենեակի  
անկիւնին յառած, մնաց այդպէս պառկած մինչև երեկոյ: Տան-  
ջակից աշխատանք էր կատարւում նրա հոգու մէջ, Այն, ինչ որ  
ասաց Նեխլիւդօվը, կանչում էր նրան այն աշխարհը, ուր նա  
տանջուել էր այնքան և որտեղից հեռացել էր, առանց հասկա-  
նալու նրան և ատելութիւն զգալով դէպի նա: Նա այժմ զրկուել  
էր այն ինքնամոռացութիւնից, որի մէջ ապրում էր վերջին տա-  
րիներս, իսկ ապրել պարզ յիշելով անցեալը՝ չափազանց ծանր  
էր: Երեկոյեան նա նորից օղի գնեց ու հարթեց իր ընկերուհի-  
ների հետ:

## XLVII

«Այդպէս ուրեմն, Այդպէս», — մտածում էր Նեխլիւդօվը,  
դուրս գալով բանտից և միայն այժմ լիովին հասկանալով իր

ամբողջ մեղքը: Եթէ նա չը փորձէր քաւել իր արածը, երբէք չէր էլ զգալ այդ արածի ամբողջ յանցաւորութիւնը, և բացի այդ՝ Մասլօվան էլ չէր զգալ նրա պատճառած չարիքի ամբողջ նշանակութիւնը: Միմիայն այժմ այդ բոլորը բացայայտուեց իր ամբողջ ահաւորութեամբ: Միայն այժմ նա տեսաւ, թէ ինչ էր արել ինքը այդ կնոջ հոգու հետ և այդ կինը տեսաւ, թէ ինչ էր բերել նա իր զլիին: Առաջ Նեխլիւդօվը խաղում էր իր զգացմունքի հետ, հիանում էր ինքն իր վրայ և զմայլում իր զղչումով, իսկ այժմ ուղղակի սարսափ պատեց նրան: Թողնէր այդ կնոջը ու հետանար,—նա լաւ զգում էր, որ չէր կարող այդ անել,—և սակայն չէր կարողանում նոյնպէս երեակայել, թէ ինչ կարող է դուրս գալ իր և նրա այժմեան յարաբերութիւններից:

Բանտի գոան մէջ մէկը մի տոմսակ տուեց Նեխլիւդօվին: Դուրս գալուց յետոյ նա կարգաց այդ տոմսակը: Ահա թէ ինչ էր գրուած նրա մէջ մատիտով ու արագ գրով:

«Իմանալով, որ դուք, հետաքրքրուելով մի քրէական յանցաւորով, այցելում էր բանտը, ցանկացայ տեսնուել ձեզ հետ: Թուլաւութիւն խնդրէք ինձ հետ տեսնուելու: Ձեզ թոյլ կը տան և ես շատ կարեոր բաներ կը հազորդեմ ձեզ ձեր հովանաւորեալի և քաղաքական յանցաւորների համար: Ձեզ երախտապարտ Վերա Բօգոդուխովսկայա»:

«Բօգոդնելիսկայա: Ի՞նչ Բօգոդուխովսկայա, —մտածեց Նեխլիւդօվը, որ ամբողջապէս պաշարուած էր Մասլօվայի հետ ունեցած տեսակցութեան տպաւորութիւններով և առաջին բոպէին չէր կարողանում ոչ մի յիշողութիւն կապել այդ անուան ու ձեռքի հետ: — Հա, — յանկարծ մտաբերեց նա: — Այն սարկաւագի աղջիկն է, որ արջի որսի ժամանակ ծանօթացաւ հետառ»:

Վերա Բօգոդուխովսկայան վարժուհի էր Նիմիյ—Նօվգորոդի խոռոշ նահանգում, ուր Նեխլիւդօվը իր ընկերների հետ գնացել էր արջ որսալու: Այդ վարժուհին Նեխլիւդօվից փող էր ինդրել բարձրագոյն կուրսերը գնալու: Նեխլիւդօվը ուզած փողը տուել էր ու մոռացել նրա մասին: Այժմ դուրս էր գալիս, որ այդ նախկին վարժուհին բանտ էր ընկել իբրև քաղաքական յանցաւոր, և, երեսի, իմանալով նրա պատճութիւնը, առաջարկում էր նրան իր ծառայութիւնները: Ի՞նչպէս թեթև ու պարզ էր ամեն ինչ այն ժամանակ, և ինչպէս ծանր ու բարդ էր ամեն ինչ այժմ: Նեխլիւդօվը կենդանի կերպով և սրաի բերկրութեամբ յիշեց այն ժամանակը և իր ծանօթանալը Բօգոդուխովսկայայի հետ: Բարեկենդաններից առաջ էր այդ, մի խոռ անկիւնում, երկաթուղու կայարանից 60 վերստ հեռու: Որսը շատ աջող էր անցել,

երկու արջ էին սպանել և ճանապարհ ընկնելուց առաջ ճաշում էին, երբ այն խրճիթի տէրը, որ նրանք իջել էին, եկաւ ասաց, թէ սարկաւագի աղջիկը եկել է, ուզում է տեսնել իշխան Նեխումովին:

— Սիրուն է, — հարցրեց որսորդներից մէկը:

— Է՞ն, ինչեր էք ասում, — ասաց Նեխումովը, վերկացաւ սեղանից և, զարմանալով, թէ ինչ գործ կարող է ունենալ իր հետ սարկաւագի աղջիկը, երեսին լուրջ արտայայտութիւն տուեց ու գնաց տանտիբաջ սենեակը:

Սենեակում նրան սպասում էր թաղիքէ գլխարկ դրած ու փոքրիկ մուշտակ հագած մի ջլուտ օրիորդ, նիհար ու տգեղ դէմքով, որի մէջ լաւ էին միայն աչքերն ու կամարաձև յօնաքրը:

— Ահա սա է իշխանը, Վերա Եֆրեմօվնա, — ասաց պառաւ տանտիբուհին, — ասա ինչ որ ուզում էիր, ես կը գնամ:

— Ինչով կարող եմ ձեզ օգտակար լինել, — հարցրեց Նեխումովիը:

— Ես... ես... Դուք հարուստ էք ու շաղ էք տալիս փողերը գատարկ բաների համար, որսորդութեան համար: Ես գիտեմ, — սկսեց օրիորդը՝ ասստիկ շիոթուելով, — իսկ ես միայն մի բան եմ ուզում, ես ուզում եմ օգտակար լինել ուրիշներին, և սակայն ոչինչ չեմ կարող անել, որովհետեւ ոչինչ չը գիտեմ:

— Ես ինչ կարող եմ անել այդ բանում:

— Ես վարժուհի եմ, բայց ուզում եմ գնալ կուրսերը, սակայն ինձ չեն թողնում: Այսինքն թողնում են, բայց միջոց չունենք: Տուէք ինձ միջոցներ, ես կ'աւարտեմ ուսումն ու յետոյ յետ կը տամ ձեզ ձեր փողը:

Նրա աչքերը շիտակ մարդու աչքեր էին ու բարի, և նրա դէմքի ամբողջ արտայայտութիւնը, և վճռական, և երկշուտ, այս-քան սրտաշարժ էր, որ Նեխումովը, ինչպէս շատ անգամ պատահում էր նրան, յանկարծ մտաւ օրիորդի դրութեան մէջ, հասկացաւ նրան ու խզնաց:

— Ես կարծում եմ, վաս բան է, որ հարուստ մարդիկ արջեր են սպանում ու գիւղացիներին հարբացնում: Միթէ չեն կարող բարի գործ կատարել: Ինձ միմիայն 80 ոռորդի է հարկաւոր: Բայց եթէ չէք ուզում, ինձ համար միենոյն է, — ասաց նա բարկութեամբ, իր համար անսպաստ կերպով բացատրելով այն յամառ ու լուրջ հայեացքը, որ Նեխումովը յառել էր նրա վրայ:

— Ի՞նդհակառակը, ես շատ չորհակալ եմ, որ դուք ինձ առիթ էք տալիս...

Երբ օրիորդը հասկացաւ, որ նա համաձայնում է, կարմը-  
րեց ու լսեց:

—Այս բողէիս կը բերեմ,—ասաց Նեխիւգովը:

Նա դուրս եկաւ սրահը և այստեղ պատահեց իր ընկեր-  
ներից մէկին, որ ականջ էր դնում նրանց խօսակցութեանը:  
Առանց պատասխանելու ընկերների կատակներին, նա պայու-  
սակից հանեց փողը ու տարաւ տուեց օրիորդին:

—Խնդրեմ, ինդրեմ, չնորհակալութիւն մի արէք: Ե՞ս պէտք  
է ձեզնից չնորհակալ լինեմ:

Նեխիւգովը հաճոք էր զգում այժմ այդ բոլորը յիշելիս.  
հաճոք էր զգում, յիշելով, ինչպէս քիչ մնաց կռուէր իր ըն-  
կեր օֆիցիէրի հետ, որ ուզում էր վատ կատակի նիւթ դարձ-  
նել այդ, ինչպէս միւս ընկերը իր կողմն անցաւ և այդ պատ-  
ճառով ինքն ու նա աւելի մօտ ընկերացան, ինչպէս ամ-  
բողջ որսորդութիւնը յաջող էր և ուրախ, և ինչպէս լաւ էր  
զգում նա ինքն իրան, երբ գիշերը վերադառնում էին դէպի  
երկաթուղու կայարանը Երկձի սահնակների շարանը նեղ  
շաւիղով անաղմուկ սլանում էր մերթ բարձր, մերթ ցած ան-  
տաների մէջով, որոնց ձիւնակալած եղեինները ճկում էին  
ձիւնի ծանրութեան տակ: Խաւարի մէջ երբեմն-երբեմն որսորդ-  
ներից մէկը կացնում էր իր անուշաբոյր պալիրոսը և փայլե-  
ցնում կրակի կարմիր բողը: Որսի տեղը գտնող Օսիաք, ծնկնա-  
հան խրուելով ձիւնի մէջ, վաղում էր սահնակից սահնակ,  
նստում կառապանի մօտ ու պատմում եղջերուների մասին, ո-  
րոնք այժմ թափառում են խրուենկ ձիւների միջով ու կրծում  
ծառերի կեղենները, և արջերի մասին, որոնք իրանց խոր որջե-  
րում գնչացնում են այժմ իրանց ջերմ շունչը օդանցքի մի-  
ջով:

Նեխիւգովը յիշեց այդ բոլորը և ամենից աւելի այն եր-  
ջանիկ զգացմունքը, որ առաջանում էր նրա մէջ իր առողջու-  
թեան, ոյժի և անհոգութեան գիտակցութիւնից: Թոքերը ուռ-  
չում, պրկում էին կիսամուշտակը ու ներս չնչում սառնամա-  
նի օդը, սահնակի ձիւկամարները դիպչում էին ծառերի ճիւղ-  
քերին ու թափ տալիս ձիւնը դէմքերի վրայ, մարմինը տաք  
էր, երեսը՝ զով, և հոգին ազատ հոգսերից, խղճի խայթոցնե-  
րից, ահից ու ցանկութիւններից: Ի՞նչ լաւ էր այն ժամանակ:  
իսկ այժմ Տէր Աստուած, որբան կոկծալից ու ծանր էր այդ  
բոլորը:

XLVIII

Միւս առաւօտ զարթնելով, Նեխլիւդօվը յիշեց այն բոլորը, ինչ որ եղել էր նախլննթաց օրը, և սարսափեց:

Բայց, չը նայելով այդ սարսափին, նա աւելի ևս հաստատ, քան առաջ երբեցէ, վճռեց շարունակել սկսածը:

Այդ՝ պարտականութեան գիտակցութեան գդացմունքով նա դուրս եկաւ տանից ու գնաց Մասլեննիկօվը մօտ, որպէս զի թոյլտութիւն խնդրէր այցելելու բանտում, բացի Մասլովայից, նաև այն Մենչօվա պառաւին ու նրա տղային, որոնց համար ինդրել էր նրան Մասլօվան. բացի դրանից, նա ուզում էր թոյլտութիւն ինդրել տեսնուելու նաև Յօդողուխօվակայայի հետ, որը կարող էր օգտակար լինել Մասլօվային:

Նեխլիւդօվը վաղուց էր ճանաչում Մասլեննիկօվին, զօրագնդում եղած ժամանակից: Մասլեննիկօվը այն ժամանակ նրանց գնդի գանձապահն էր: Այդ մի վերին աստիճանի բարեհոգի ու ճշտակատար օֆիցիէր էր, որ աշխարհումս ոչինչ չը գիտէր և չէր էլ ուզում իմանալ իր գնդից զատ: Այժմ նա կառավարիչ էր գարձել և զօրագունդը փոխարինել էր նահանգով ու նահանգական վարչութեամբ: Նա պսակուել էր մի հարուստ ու ժիր կնոջ հետ, որ և ստիպել էր նրան զինուորական ծառայութիւնից անցնել քաղաքացիականի:

Կինը ծիծաղում էր մարդու վրայ և գգւում նրան, ինչպէս իր ձեռնասուն անսառւնի: Նեխլիւդօվը անցեալ ձմեռ մի անգամ եղել էր նրանց տանը, բայց այնքան անհետաքըրիր էր թուացել նրան այդ ամուսնական զոյզը, որ այնուհետև այլ ևս ոչ մի անգամ չէր գնացել մօտները:

Մասլեննիկօվը ամբողջապէս փայլեց ուրախութիւնից, տեսնելով Նեխլիւդօվին: Նրա գէմքը էլի այնպէս գէր էր ու կարմիր, կազմուածքը՝ յաղթանդամ և հագուստը՝ հիանալի, ինչպէս և զինուորական ծառայութեան ժամանակ: Այստեղ այդ հագուստը մի՛ միշտ մաքուր, վերջին մօդայի համեմատ ուսերն ու կուրծքը քիփ հուապ տուած համազգեստ էր կամ զինուորական ամենօրեայ զգեստ, իսկ այժմ այդ՝ վերջին մօդայով կարուած քաղաքացիական զգեստ էր, որ նոյնպէս քիփ հուապ էր տալիս նրա կուշտ մարմինը և դուրս գցում լայն կուրծքը: Նա վիցմունդիրով էր: Չը նայելով տարիկների տարբերութեանը (Մասլեննիկօվը քառասունի մօտ էր), նրանք «ուռ»-ով էին խօսում իրար հետ:

—Այ այդպէս, չնորհակալ եմ, որ եկար, Գնանք կնոջս մօտ:

իւաւ է, ես էլ նիստից առաջ մի տաս բովէ ունեմ ազատ: Գիտես,  
որ նահանգապետը այսանդրէ չէ, գնացել է: Ես եմ կառավարում  
նահանգը, —ասաց նա հաճողքով, որը չէր կարողանում ծածկել:  
—Ես գործով եմ եկել քո մօտ:

—Ի՞նչ գործ, —յանկարծ, կարծես իրան հաւաքելով, հարց-  
րեց Մասլեննիկովը վախեցած ու մի քիչ խիստ ձայնով:

—Բանտում մի կալանաւոր կայ, որի վիճակը ինձ շատ  
հետաքրքրում է (բանտ խօսքից Մասլեննիկովի դէմքը աւելի  
ևս խիստ արտայայտութիւն ստացաւ), և ես կ'ուզէի տեսակցել  
նրա հետ ոչ ընդհանուր այցելարանում, այլ գրասենեակում և  
ոչ միայն սրոց օրերին, այլ աւելի յաճախ: Ինձ ասացին, որ  
այդ քեզնից է կախուած:

—Ի հարկէ, տոն cher (սիրելիս), ես ամեն ինչ պատրաստ  
եմ մսել քեզ համար, —ասաց Մասլեննիկովը, երկու ձեռքով շօ-  
շափելով նրա ծնկները, կարծես ուզելով դրանով մեղմացնել իր  
վեհութիւնը, —այդ կարևոր է, բայց, պէտք է քեզ ասեմ, որ ես  
խալիք եմ միայն մի ժամով:

—Ուրեմն կարդղ ես թոյլուութեան թուղթ տալ ինձ այդ  
կալանաւորուհու հետ տեսակցելու համար:

—Կի՞ն է քեզ հետաքրքրող կալանաւորը:

—Այս:

—Ի՞նչու համար են նրան նստացրել:

—Թունաւորման համար: Բայց անկանոն կերպով է դա-  
տապարտուած:

—Այ քեզ մեր գովական արդար դատարանը, ils n'en font  
point d'autres \*), —չեմ իմանում ինչու, ասաց նա Փրանսերէն:

—Ես գիտեմ, որ գու համաձայն չեմ ինձ հետ, բայց ինչ արած,  
c'est mon opinion bien arrêtée \*\*), —աւելացրեց նա, յայտնելով  
մի կարծիք, որ այդ տարուայ ընթացքում մի քանի անգամ  
տարեր-տարեր ձեերով կարդացել էր մի խաւարամիտ, պահ-  
պանողական լրագրում: —Ես գիտեմ, զու ազատամիտերից ես:

—Զը գիտեմ, ազատամիտ եմ թէ չէ, —ժպտալով ասաց  
Նեխիլեգովը, որ միշտ զարմանում էր այն բանից, որ ամենքը  
իրան որոշ կուսակցութեան անդամ էին համարում և ազատա-  
միտ անուանում միմիայն այն պատճառով, որ նա, որ և մար-  
դու դատելիս, ասում էր, թէ պէտք է նախ և առաջ այդ մար-  
դուն խօսեցնել թէ բոլոր մարդիկ հաւասար են դատարանի

\*) Դրանց (երդուեալ դատաւորների) վճիռները միշտ ալդպէս են  
լինում:

\*\*) Այդ իմ հաստատ կարծիքն է:

առաջ և թէ չը պէտք է ծեծել ու տանջել առհասարակ մարդկանց և մանաւանդ նրանց, որոնք դեռ չեն դատապարտուած, — Զը գիտեմ, աղաստամիտ եմ ես թէ ոչ, բայց գիտեմ, որ այժմեան դատարանները, որքան էլ վատ լինեն նրանք, այնուամենայնիւ աւելի լաւ են, քան առաջուան դատարանները,

— Իսկ ում ես փաստարան վարձելի

— Դիմեցի ֆանարինին:

— Ախ, ֆանարինին, — կնճոռւելով ասաց Մասլենիկօվը, յիշելով, թէ ինչպէս անցեալ տարի այդ ֆանարինը իրան, դատարանում հարց ու փորձի ենթարկելով իբրև վկայի, ամենամեծ քաղաքավարութեամբ ծաղրի առարկայ էր դարձրել կէս ժամ շարունակ:

— Ես քեզ խորհուրդ չէի տալ գործ ունենալ նրա հետ ֆանարինը — c'est un homme terrible \*:

— Մի ուրիշ ինդիքտ էլ ունեմ քեզնից, — ասաց Նեխիլիւդօվը, ուշք չը դարձնելով նրա ասածին, — Շատ վաղուցուանից ես ծանօթ եմ մի վարժուհի օրիորդի հետ, ասատիկ ողորմելի արարած է և այժմ նոյնպէս բանտումն է: Ուզում է տեսնուել հետու կարող ես նաև նրան տեսնելու թոյլտութիւն տալ, չչ:

Մասլենիկօվը փոքր ինչ թեքեց գլուխը ու սկսեց մտածել,

— Քաղաքական յանցաւոր է:

— Այո, այդպէս ասացին ինձ:

— Պէտք է իմանաս, որ քաղաքականների հետ տեսնուելու իրաւունք տրւում է միայն ազգականներին, բայց ես քեզ կը տամ ընդհանուր թոյլտութիւն: Je sais que vous n'abusez pas \*\*)... Ինչպէս է քո այդ պրոտեցը — ի (հովանաւորեամբ) անունը... Բօգոդուխօվսկայա... Elle est jolie \*\*\*)?

— Հիմեսէ \*\*\*\*).

Մասլենիկօվը չմահաւանութեամբ թափ տուեց գլուխը և մօտենալով սեղանին, արագ-արագ գրեց տպած վերնագիր ու նեցող թղթի վրայ. «Այս տոմսը ցոյց տուող իշխան Դմիտրիյ իվանօվիչ Նեխիլիւդօվին թոյլ եմ տալիս բանտի դրասենեակում տեսալյութիւն ունենալ կալանաւորուհի Մասլովյի, ինչպէս նաև ֆէլոչերուհի Բօգոդուխօվսկայայի հետ, — վերջացրեց նա ստորագրութեան տուտը երկարացնելով:

— Այ կը տեսնես, թէ ինչ կարդ ու կանոն է տիրում այն-

\*.) Փչացած մարդ է:

\*\*) Գիտեմ, որ ի չարը չէք գործ դնի:

\*\*\*) Սիրո՞ւն է:

\*\*\*\*) Սլանդակ:

տեղու իսկ կարգ պահել այնտեղ շատ դժուար է, որովհետև բռ-  
լորովին լիքն է, բայց ես այնուամենայիւ խիստ հսկում եմ և  
սիրում եմ այդ գործը, կը տեսնես, շատ լաւ է այնտեղ նրանց  
դրութիւնը և իրանք էլ գոհ են Միայն թէ պէտք է մարդ իմանայ  
նրանց հետ վարուելու ձևը Այ, օրինակ, նորերս մի անախորժ  
դէպէ եղաւ, անհնազանգութիւն: Մի ուրիշը իմ տեղ իբր խռո-  
վութիւն կ'ընդունէր այդ և շատերին կ'անբախտացնէր: Բայց  
այժմ շատ լաւ անցաւ գործը: Մի կողմից հոգատարութիւն է  
պէտք, միւս կողմից՝ անյողդողդ իշխանութիւն:—ասաց նա,  
սղմելով շապկի ոսկեկոճակ և պինդ թեքի մէջից երևացող սպի-  
տակ ու թիվիկ բռունցքը, որի մատին փայլում էր փերուզա-  
զարդ մատանին:—հոգատարութիւն և անյողդողդ իշխանութիւն:  
—Այդ ես չը գիտեմ:—ասաց Նեխլիւդօվը, —երկու անգամ  
գնացել եմ այնտեղ, երկու անգամն էլ սարսափելի ծանր  
տպաւորութիւն եմ ստացել:

—Գիտես ինչ: Շատ լաւ կ'անես, եթէ մօտիկ ծանօթանաս  
կոմսուհի Պատէկի հետ,—շարունակեց խօսքով ընկած Մասլեննի-  
կօվը, —նա բոլորովին նուիրուել է այդ գործին: Elle fait beau-  
coup de bien \*). Նրա չնորհիւ է գուցէ, որ ինձ,—առանց կեղծ  
համեստութեան պիտի ասեմ, —յաջողեց փոփոխել այնտեղ ա-  
մեն ինչ, և այնպէս փոփոխել, որ ոչ միայն չը կան այն սար-  
սափելի բաները, որ կային առաջ, այլ և ուղղակի շատ լաւ են  
զգում իրանց՝ կալանաւորները: Այ ինքդ կը տեսնես: Ինչ վե-  
վարերում է ֆանարինին, ես անձամբ չեմ ճանաչում նրան,  
ասենք, իմ հասարակական դիրքի չնորհիւ, մենք ընդհանուր  
բաներ չենք էլ կարող ունենալ, բայց, պէտք է ասեմ, որ նա  
միանգամայն վատ մարդ է, և բացի այդ այնպիսի բաներ է թոյլ  
տալիս իրան ասել դատարանում, այնպիսի բաներ...

—Ուրեմն շատ չնորհակալ եմ:—ասաց Նեխլիւդօվը, վեր-  
ցնելով թոյլտութեան թուղթը, և մնաս բարե արեց իր նախկին  
ընկերոջ հետ, առանց լսելու նրա խօսքի շարունակութիւնը:

—Հապա կնոջս մօտ չես գնայ:

—Զէ, ներիր, այժմ ժամանակ չունեմ:

—Ի՞նչպէս կարելի է. նա ինձ չի ների այդ բանը, —ասում  
էր Մասլեննիկօվը, ճանապարհ դնելով իր նախկին ընկերոջը  
մինչև սանդուխների առաջին գաւիթը, ինչպէս նա ճանապարհ  
էր դնում ոչ առաջնակարգ, այլ երկրորդական կարեորութիւն  
ունեցող մարդկանց, որոնց թուին էր դասում և Նեխլիւդօվին:  
—Զէ, խնդրում եմ, մտիր գոնէ մի բռպէտով:

\* ) Շատ բարիքներ է անում նա:

Բայց Նեխլիւդովը անդրդուելի մնաց և այն ժամանակ, երբ լաքէն ու գոնապանը վազէվաղ մօտեցան իրան՝ վերարկուն ու գլխարկը տալու և բանալու դռւոք, որի մօտ զրսելից կանգնած էր մի փողոցապահ ոստիկան, նա ասաց Մասլեննիկովն, որ այժմ ոչ մի կերպ չի կարող:

—Որ այդպէս է, ինդրեմ, հինգշաբթի եկ մեզ մօտ: Կնոջս Ընդունելութեան օրն է այդ: Ես կ'ասեմ իրան,—գոռաց նրան սանդուխների վերեից Մասլեննիկովը:

### XLIX

Նոյն օրն և եթ Մասլեննիկովի մօտից ուղղակի բանառ գնալով, Նեխլիւդովը քայլերն ուղղեց դէպի բանտապետի ծանօթ բնակարանը: Լսում էին նոյն վատ դաշնամուրի հնչիւնները, բայց այս անգամ դաշնակահարը նուագում էր ոչ թէ Լիստի բապսօդիան, այլ կլէմէնտի էտիւդները, թէև էլի առաջուան պէս արտասովոր կերպով ուժգին, որոշակի ու արագ: Աղավիխնը, որի աչքը էլի կապած էր, բանալով դուռը, ասաց, որ կապիտանը տանն է, առաջնորդեց Նեխլիւդովին իրանց փոքրիկ հիւրասենեակը, ուր կային մի բազմոց, մի սեղան և բրդէ գործուած անձնուցիկի վրայ դրուած մի մեծ լամպ, որի վարդագոյն թղթէ լուսամփուր խանձուել էր մի կողմից: Շուտով դուրս եկաւ գլխաւոր բանտապետը տանջուած ու տիսուր դէմքով:

—Խնդրեմ, նստէք, ի՞նչ կը կամենայիք, —ասաց նա, մայր գցելով իր համազգեստի միջին կոճակը:

—Նոր՝ փոխ նահանագպետի մօտ էի և ստացայ այս թոյլարութեան թուղթը, —ասաց Նեխլիւդովը տալով նրան թերթը: —Ես կ'ուզէի տեսնել Մասլովային:

—Մարկօվային, —հարցրեց բանտապետը, լաւ չը լսելով դաշնամուրի աղմուկի չորհիւ:

—Մասլովային:

—Այն, այն:

Բանտապետը վեր կացաւ ու մօտեցաւ այն դռանը, որի յետեից լսում էին կլէմէնտի գեղգեղանկները:

—Մարտունա, չես կարող գոնէ մի բոպէ սպասել, —ասաց նա այնպիսի ձայնով, որից երեսում էր, որ աղջկայ երաժշտութիւնը նրա կեանքի խաչն էր կազմում, —մարդ չի կարողանում ոչինչ լսել:

Դաշնամուրը լոեց, լսուեց դժգոհ ոտնաձայն, և մէկը ներս նայեց դռան արանքով:

Բանտապետը, կարծես թեթևացումն զգալով երաժշտու-

թեան այդ ընդհատումից, կպցրեց թոյլ թութունից շինածմի-  
հաստ պասպիրոս, մի հատ էլ առաջարկեց Նեխլիւդօվին, Նեխ  
լիւդօվը հրաժարուեց:

—Մասլօվային...

—Մասլօվային այսօր անյարմար է տեսնել,—ասաց բան-  
տապետը:

—Ի՞նչո՞ւ,

—Այնպէս. դուք ինքներդ էք մեղաւոր,—ասաց բանտա-  
պետը, փոքր ինչ ժպտալովի—իշխան, ինչո՞ւ էք նրա ձեռքը փող  
տալիս Եթէ ուղում էք, տուէք ինձ: Ամբողջապէս իրանը կը  
լինի, թէ չէ երէկ դուք երեկ փող էք տուել նրան, նա էլ այդ  
փողով օղի է ձեռք զցել, —չենք կարողանում այդ անիծած բա-  
նը արմատաթիլ անել այստեղից,—ու այսօր հարբել է, և սաս-  
տիկ թունդ է հարբել, մինչև անդամ գժութիւններ է անում:

—Միթէ,

—Հաստատ բան եմ ասում, նոյն իսկ ստիպուած եղայ  
խիստ միջոցներ ձեռք առնել. տեղափոխեցի մի Ուրիշ սենեակի  
Հանգիստ բնաւորութեան տէր կին է, բայց դուք իրան փող մի  
տուէք: Ուրիշ տեսակ մարդիկ են այստեղ:

Նեխլիւդօվը վառ կերպով յիշեց երէկուանը և նորից սար-  
սափ զգաց:

—Իսկ քաղաքական յանցաւոր Բօգողուխօվսկայային կա-  
րելի է տեսնել, —հարցրեց Նեխլիւդօվը մի փոքր լոելուց յետոյ:

—Ի՞նչո՞ւ չէ, այդ կարելի է, —ասաց բանտապետը: —Դո՞ւ  
ինչ ես անում այստեղ, —դիմեց նա իր հինգ, վեց տարեկան աղ-  
ջիան, որ մտել էր սենեակը և գալիս էր նրա կողմը, զլուխը  
այնպէս ծուած, որ աչքը չը հեռացնի Նեխլիւդօվից: —Տես, վայր  
կ'ընկնես, —ասաց նա, ժպտալով այն բանի վրայ, որ երեխան  
իր առջնը չը նայելով, սայթաքեց, ոտը դէմ առաւ գորգին ու  
ինքը վազէվագ մօտեցաւ հօրը:

—Ուրեմն, եթէ կարելի է, ևս կ'երթամ նրան տեսնելու:

—Կարելի լինելը կարելի է, —ասաց բանտապետը, գրկելով  
երեխային, որ շարունակում էր նայել Նեխլիւդօվին: —Գուցէ...

Բանտապետը վեր կացաւ և քնքշաբար հեռացնելով իրա-  
նից երեխային, դուրս եկաւ նախասենեակը:

Հէնց որ նա հագաւ կապած աչքով աղախնի տուած վե-  
րաբերուն ու ոտը դոնիցը դուրս դրեց, ձեռաց էլի սկսուեցին  
կլէմէնտիի գեղգեղանքները:

—Կօնսէրվատորիայումն էր սովորում, բայց այնտեղ կարգ  
կանոն չը կայ: Մեծ ձիքը ունի սակայն, —ասում էր բանտա-  
պետը սանդուխներով իջնելիս: —Ուղում է կօնցէրտներ տալ:

Բանտապետն ու Նեխլիւդօվը մօտեցան բանտին։ Դոնակը, բանտապետի մօտենալուն պէս, ձեռաց բացուեց։ Վերակացուները, ձեռները քունքերին գրած, ուղեկցում էին նրան աջքերով։ Նախազաւթում նրանց հանդիպեցին ածիլուած կիսագըլուխներով չորս կալանաւորներ, որոնք ինչոր հեղուկով լի մի աման էին տանում։ Բանտապետին տեսներուն պէս՝ նրանք բոլորն էլ կուչ եկան, իսկ մէջներից մէկը առանձնապէս կծկուեց ու մոայլ կերպով կիտեց յօնքերը, որոնց տակից պսպղացին սև աշքերը։

—Զիրքը, ի հարկէ, պէտք է կատարելագործել, տաղանդը չը պէտք է թաղել. բայց, միւս կողմից, փոքրիկ բնակարանում շատ ծանր է տանել այդ բանը, —շարունակեց բանտապետը իր խօսալցութիւնը, առանց ամեննեին ուշք գարձնելու այդ կալանաւորների վրայ, ու Նեխլիւդօվի հետ գնաց հաւաքարանը, յոգնած-յոգնած քաշ տալով ոտները։

—Ում էիք ուզում տեսնել, —հարցրեց բանտապետը։

—Բօգօդուխօվսկայային։

—Այն որ աշտարակումն է, Պէտք է ուրեմն սպասէք, —ասաց բանտապետը։

—Իսկ չի կարելի մինչ այդ տեսնուել Մենչօվերի հետ։ մայր ու տղայ են և կալանաւորուած են հրկիզութեան համար։

—Այն որ 21-րդ սենեակումն է։ Ինչու չէ, կարելի է դուրս կանչել։

—Իսկ չի կարելի Մենչօվին իր սենեակումը տեսնել։

—Զեղ համար աւելի հանգիստ կը լինի հաւաքարանումը։

—Չէ, ինձ համար հետաքրքրական կը լինէր սենեակումը տեսնել։

—Այ թէ հետաքրքրական բան էք դտել։

Այդ միջոցին կողքի դռնից դուրս եկաւ մի ֆրանտ օֆիցիր, որ բանտապետի օգնականն էր։

—Իշխանին տարէք Մենչօվի սենեակը, 21-րդ համարը,

—ասաց բանտապետը իր օգնականին, —իսկ յետոյ՝ գրասենեակը։ իսկ ես այն միւսին դուրս կը կանչեմ։ Ի՞նչպէս է անունը։

—Վերա Բօգօդուխօվսկայա, —ասաց Նեխլիւդօվը։

Բանտապետի օգնականը մի շպարած բեխերով շիկահեր ու ջահէլ օֆիցիր էր, որ ծաղկեայ օդըկօլօնի հոտ էր տարածում իր շուրջը։

—Համեցէք, —դիմեց նա Նեխլիւդօվին՝ ախորժելի ժպիտով։

—Ինչպէս երեսում է, հետաքրքրուում էք մեր բանտոց։

—Այս, և բացի այդ, հետաքրքրուում եմ նաև այդ կալա

նաւորով, որ, ինչպէս ինձ ասել են, բոլորովին անմեղ տեղն է ընկել բանտը:

Օգնականը թօթուեց ուսերը:

—Այդ պատահում է երբեմն, —հանգիստ կերպով ասաց նա, քաղաքավարութեամբ թողնելով, որ հիւրը առաջ ընկնի լայն ու գարշահոտ միջանցքը մտնելիս: —Բայց շատ անգամ էլ սուտ են ասում: Համեցէք:

Սենեակների դռները բաց էին և մի քանի կալանաւորներ միջանցքումն էին: Հաղիւ նկատելի կերպով գլուխ տալով վերակցուներին և խեթ-խեթ նայելով կալանաւորներին, որոնք կամ պատերի տակ կուչ գալով անցնում էին դէպի իրանց սենեակները կամ թէ, ձեռները ձիգ կախ գցած ու զինուորավարի աշերով ուղեկցելով իշխանաւորին, կանցնում էին դռների մօտ, —օգնականը առաջնորդեց Նեխլիւդօվին այդ միջանցքով մինչև մի ուրիշ միջանցք, որ առաջինի ձախ կողմումն էր գըտնւում և կողմուած էր երկաթէ դռնով:

Այդ միջանցքը աւելի նեղ ու մութ էր և աւելի ևս գարշահոտ, բան առաջինը, Նրա երկու կողմից երեսում էին կողպէքով կողպած դռների շարքեր: Դռները կէս վերչօկանոց տրամագծով ծակեր ունեին, որոնք բանտում աշք են կոչւում: Միջանցքում ոչ ոք չը կար, բացի տիսուր ու խորշումած դէմքով ծերունի վերակցուից:

—Ո՞ր սենեակումն է Մենչօվը, —հարցրեց օգնականը վերակցուից:

—Ութերորդում ձախ կողմից:

—Իսկ սրանց մէջ բոնուածներ կան, —հարցրեց Նեխլիւդօվը:

—Բոլորի մէջն էլ կան, բացի մէկից:

## L

—Կարելի է ներս նայել, —հարցրեց Նեխլիւդօվը:

—Ենչու չէ, —ախորդելի ժամփով ասաց օգնականը ու ըսկուց ինչ որ հարցնել վերակցուից, Նեխլիւդօվը նայեց ծակերից մէկի մէջ. ներսը մի բարձրահասակ ու փոքրիկ սև միրուքաւոր ջահէլ մարդ, միմիայն փոխնորդ հագած, յետ ու առաջ էր քայլում. խշխոց լսելով դռան մօտ, նա յետ նայեց, խոռոուեց ու շարունակեց քայլել:

Նեխլիւդօվը նայեց մի ուրիշ դռան ծակով. Նրա աշքը հանգիսկ մի ուրիշ, վախուորած խոչոր աշքի, որ միւս կողմից նայում էր ծակի միջով. Նեխլիւդօվը շտապով հեռացաւ, նայե-

լով մի երրորդ դռան ծակով, նա տեսաւ մի չատ փոքրահասակ մարդու, որ քնած էր մահճակալի վրայ, ամբողջապէս կուչ եկած ու գլուխը խալաթովը ծածկած: Չորրորդ սենեակում նըստած էր մի լայներես ու գունատ մարդ, զլուխը ցած կախ զցած ու արմունկները ծնկներին յենած: Ոտնաձայն լսելով, այդ մարդը գլուխը վեր բարձրացրեց ու նայեց: Ամբողջ դէմքի վրայ, մանաւանդ մեծ-մեծ աչքերում, երեսում էր յուսահատ թափսիծի արտայայտութիւն: Նա, ակներեաբար, չէր հետաքրքրուում իմանալ, թէ ով է նայում իր սենեակը: Ով որ ուզում է նայէր, միննոյնն է, երեսում էր, որ նա ոչ ոքից ոչ մի լաւ բան չէր սպասում: Նեխլիւդօվը սարսափ զգաց. նա դադարեց սենեակների մէջ նայելուց ու մօտեցաւ Մենչօվի 21-րդ սենեակին: Վերակացուն բաց արեց կողպած գուռութ: Մի չահէլ, երկարավիդ ու մկանոտ մարդ, բարի ու կլոր աչքերով ու փոքրիկ միրուքով, կանգնած էր մահճակալի մօտ ու վախուռած դէմքով նայում էր ներս մօնողներին, շտապ-շտապ հագնելով խալաթը: Նեխլիւդօվի վրայ առանձնապէս սաստիկ տպաւորութիւն գործեցին այդ բարի ու կլոր աչքերը, որոնք հարցական ու ահաբեկուած հայեցքով մէկ նրան էին նայում, մէկ վերակացուին, մէկ էլ օգնականին:

—Այ այս պարօնը ուզում է քեզնից հարցնել քո գործի մասին:

—Շատ չորհակալ ենք:

—Հա, ինձ պատմել են ձեր գործի մասին,—ասաց Նեխլիւդօվը, անցնելով սենեակի խորքը և կանգնելով վանդակապատ ու կեղսոս պատուհանի մօտ,—այժմ ես կ'ուզէի ձեր բերանից լսել, թէ ինչպէս է եղել այդ:

Մենչօվը նոյնպէս մօտեցաւ պատուհանին ու իսկոյն և եթ սկսեց պատմել, սկզբում՝ վախվիսելով, չուտ-չուտ նայելով օդնականին, յետոյ՝ հետզհետէ աւելի ու աւելի համարձակ կերպով: Իսկ երբ օգնականը դուրս եկաւ սենեակից միջանցքը ու սկսեց այնտեղ ինչ որ հրամաններ տալ, նա բոլորովին սիրտ առաւ: Այդ պատմութիւնը իր ոճով և եղանակով ամենասովորական ու կարգին գիւղացի պատանու պատմութիւն էր, և Նեխլիւդօվին սաստիկ տարօրինակ էր թւում, որ ինքը այդ պատմութիւնը լսում էր բանտում և անարգութեան հագուստ հագած կալանաւորի բերանից: Նեխլիւդօվը ականչ էր զնում ու միննոյն ժամանակ դիտում էր և ցածիկ մահճակալը՝ յարդէ ներքնակով, և պատուհանը՝ երկաթէ հաստ վանդակով, և կեղտոտտ, նամակալած ու քամսուած պատերը, և բանտային ոտնամաններ ու խալաթ՝ հագած այդ խեղճ ու այլակերպուած գիւղ-

դացու ողորմնվի գէմքն ու կերպարանքը, ու նրա սիրտը լցում  
էր հետզհետք աւելի ու աւելի տիրութեամբ և նա չէր ուզում  
հաւատալ, թէ ճիշտ է այդ բարեհողի մարդու պատմածը,—չէր  
ուզում հաւատալ, որովհետև սարսափելի էր կարծել, որ մար-  
դիկ կարող են ձերբակալել և, կալանաւորի խալաթ հազցնե-  
լով բանտը նստացնել մի մարդու, որ ոչնչից ոչինչ չի արել և  
որին գեռ իրանք, այդ մարդիկ անիրաւութիւն են արել Եւ  
սակայն, աւելի ևս սարսափելի էր կարծել, թէ այդ բարեհողի  
գէմքով մարդու պատմութիւնը, որ այնքան անկեղծ էր թւում,  
սուս ու հնարած բան էր: Պատմութիւնը կայանում էր նրա-  
նում, որ նրա պսակուելուց շատ չանցած՝ օղեվաճառը գլխա-  
հան էր արել ինոջը ու ձեռքիցը խլել: Խեղճ մարդը արդարու-  
թիւն էր վնասուել ամեն տեղ: Ամեն տեղ էլ օղեվաճառին ար-  
դարացրել էին: Մի անգամ նա բռնի կերպով տուն էր վերա-  
դարձրել կնոջը, բայց կինը փախել էր միւս օրը: Այն ժամա-  
նակ նա զնացել ու պահանջնել էր իր կնոջը: Օղեվաճառը ա-  
սել էր, թէ կինը այնտեղ չի (թէ ինքը տեսել էր նրան ներս  
մտնելիս), ու հրամայել էր հեռանալ: Նա չէր հեռացել: Օղե-  
վաճառն ու իր ծառան նրան այնքան ծեծել էին, որ արիւնլուայ  
էին արել, իսկ միւս օրը կրակ էր ընկել օղեվաճառի տունը:  
Խեղճին ու իր մօրը մեղադրել էին, թէ նրանք են եղել կրակ  
զցողը: Թէ նա ոչնչից տեղեակ չէր և այդ ժամանակ քաւորի  
մօտ էր եղել:

—Ճիշտ ես ասում, որ դու չես եղել կրակ զցողը:

—Մաքովս անգամ չի անցել, աղա: Այդ անաստուածը ան-  
պատճառ ինքը կրակ տուած լինի: Ասում են, ապահովագրած  
է եղել տունը: Իսկ յետոյ ինձ ու մօրս վրայ են զցել, ասում  
են, թէ մնաք սպանացել ենք նրան: Մեղքս ինչ ծածկեմ, այն  
անգամ սիրու չը համրենց, ուշունց տուեցի, բայց կրակ զցե-  
լուց տեղեկութիւն չունեմ: Կրակը սկսուած ժամանակը իսկի  
այնտեղ էլ չէի: Յետոյ դիտմամբ այնպէս են սարքել: թէ այդ  
այն օրն է եղել, երբ ես ու մայրս այնտեղ էինք: Ինքն է այ-  
րել, որ ապահովագրութեան փողը ստանայ, ու յետոյ մեր վրայ  
է զցել:

—Միթէ:

—Ասուուած է վկայ, աղա: Ոտներգ եմ ընկել,—նա ուզում  
էր չոքել, բայց նեխլիւգովը բռնից ու չը թողեց:—Պրծացրէք  
այս բանից, անմենդ տեղը կորչում եմ,—շարունակեց նա:—Ու  
յանկարծ նրա այտերը ջղաձգուեցին, լացն եկաւ ու քշտելով  
խալաթի թեր՝ սկսեց աչքերը սրբել կեղտու շապկի թեքով:

—Վերջացրէք, —հարցրեց օգնականը:

—Այու Ռուբեմն մի վհատուէք, ինչ որ կարելի է՝ կ'անեմ, —  
ասաց Նեխլիւդօվը ու դուրս եկաւ, Մենչօվը մնացել էր դռան  
մէջ կանգնած, այնպէս որ, երբ վերակացուն փակեց սենեակը,  
դռուը կպաւ նրան, Մինչ վերակացուն դռուը կողպում էր,  
Մենչօվը նայում էր դռան ծակովը:

## II

Յետ դառնալով լայն միջանցքով (ճաշի ժամանակն էր և  
սենեակները բաց էին), բաց գեղնագոյն խալաթներ, կարծ ու  
լայն վարտիքներ և բանտային ոտնամաններ հագած կալանա-  
ւորների միջով, որոնք ագահաբար նայում էին նրան, Նեխլիւ-  
դօվը զգում էր տարօրինակ զգացմունքներ, և կարեկցութիւն  
դէպի բանտում նստածները, և չը գիտեմ ինչու, ամօթ, ամօթ,  
որ ինքը այդպէս հանգիստ կերպով դիտում է նրանց:

Միջանցքներից մէկում մէկը, ոտնամանները թիթիացնե-  
լով, վաղ տուեց, մտաւ մի սենեակ և այնտեղից դուրս եկան մի  
խումբ մարդիկ ու, զլուխ տալով Նեխլիւդօվին, կանգնեցին նրա  
ճանապարհի վրայ:

—Զերդ բարեձննդութիւն, չը գիտեմ, ինչպէս ասեմ, հրա-  
մայեցէք, որ մեր բանը վճռեն:

—Ես իշխանաւոր չեմ, ես ոչինչ չը գիտեմ:

—Միենոյն է, ասացէք իշխանաւորներին կամ ում կ'ու-  
ղեք, —ասաց վրդովուած ձայնու: —Ոչինչ մեղք չունենք ու եր-  
կրորդ ամիսն է, ինչ զուր տեղը տանջւում ենք:

—Ի՞նչպէս ինչու, —հարցրեց Նեխլիւդօվը:

—Այնպէս, բռնել են ու ցցել բանաը: Երկրորդ ամիսն է  
ինչ նստած ենք, բայց չենք իմանում, թէ մեր մեղքն ինչ է:

—Ճիշտ է, պատահմունք է, —ասաց բանտապետի օգնա-  
կանը, —անցաթուղթ չունէին, բռնել էինք, որ իրանց նահանգը  
ուղարկէինք, բայց այնտեղի բանաը այրուել էր և նահանգա-  
կան վարչութիւնը գրել էր մնդ, որ չուղարկենք: Մենք էլ այդ  
պատճառով ուրիշ նահանգներից ով որ կար իրանց տեղերն ու-  
ղարկեցինք, իսկ սրանց պահում ենք:

—Ի՞նչպէս, հէնց միայն այդ պատճառով, —հարցրեց Նեխ-  
լիւդօվը, կանգ առնելով դռան մէջ:

Կալանաւորական խալաթ հագած 40 հոգուց բաղկացած  
բազմութիւնը շրջապատեց Նեխլիւդօվին ու բանապետի օդ-  
նականին: Միանգամից սկսեցին խօսել մի քանի հոգի: —Օդնա-  
կանը կանգնեցրեց նրանց:

—Թող մէկը միայն խօսի մէջներիցդ:

Մէջներիցը առաջ եկաւ մի բարձրահասակ ու վայելչատես զիւղացի, որ կը լինէր մօտ յիսուն տարեկան, նա բացատրեց Նեխիւդօվին, որ իրանց բոլորին էլ աքսորել են ու բանտը դըրել անցաթուղթ չունենալու պատճառով: Բայց իսկապէս իրանք բոլորն էլ անցաթուղթ ունէին, միայն թէ մօտ երկու շաբաթ ժամանակները անցել էր: Ամեն տարի այդպէս պատահում էր ու ոչինչ չէին ասում, բայց այս անգամ բռնել են ու երկու ամիս է, ինչ եղեռնագործների պէս պահում են բանտում:

—Մենք բոլորս քարտաշ ենք, արհեստաւորների մի ընկերութիւնից: Ասում են, մեր նահանգական քաղաքում բանտը այրուել է: Մենք ինչ մեղաւոր ենք այդ բանում: Աստուծու անունով աղաջում ենք, խեղճ եկէք մեր վրայ, մի ճար արէք:

Նեխիւդօվը լսում էր և գրեթէ չէր հասկանում այդ վայելչատես ծերունու ասածները, որովհետեւ նրա ուշադրութիւնը ամբողջապէս գրաւել էր մի մեծ, մուգ-մոխրագոյն ու բազմուտանի ողիլ, որ սողում էր վայելչատես քարտաշի երեսի մազերի արանքին:

—Ի՞նչպէս Միթէ հէնց դրա համար, —ասաց Նեխիւդօվը, դիմելով բանտապետի օգնականին:

—Այն, իսկապէս պէտք էր գրանց ուղարկել ու հաստատել իրանց բնակութեան տեղում, —ասաց օգնականը:

Հէնց որ օգնականը վերջացրեց խօսքը, բազմութեան մէջ յից առաջ եկաւ մի փոքրիկ մարդուկ, նոյնպէս կալանաւորի խալաթ հագած, ու սկսեց, տարօրինակ կերպով ծոմուելով բերանը, խօսել այն բանի մասին, որ իրանց այդտեղ անմեղ տեղը տանջում են:

—Շներից վատթար... սկսեց նա:

—Դէ, դէ, բերանդ շատ մի շաղ տուր, լեզուգ մի քիչ կարճ պահի, թէ չէ դիտես...

—Ի՞նչ պէտք է դիտենամ, —յուսահատ կերպով ասաց փոքրիկ մարդուկը: —Որ և է մեղք կայ մեր վրայ:

—Սնուս, —զոռաց իշխանաւորը, և փոքրիկ մարդուկը լսեց: «Այս ինչ բաներ են», ասում էր ինքն իրան Նեխիւդօվը, որին ուղեկցում էին դռներից դուրս նայող ու միջանցքում հանդիպող կալմանաւորների հարիւրաւոր աչքեր և որ այնպէս էր զգում իրան, կարծես թէ՝ իբր պատժուած՝ անցնում է զինուորների երկու շաբքի արանքով և երկու կողմից հարուածներ են իջեղնում գլխին:

—Միթէ, յիրաւի, բանտում պահում են բոլորովին անմեղ մարդկանց, —ասաց Նեխիւդօվը, երբ նա ու բանտապետի օգնականը դուրս եկան միջանցքից:

— Ուրիշ ճար չը կայ: Ասենք, շատ բան էլ սուտ են առում: Իրանց որ լսէք, բոլորն էլ անմեղ են, — ասաց բանտապետի օգնականը:

— Բայց սրանք հօ ոչ մի բանում մեղաւոր չեն:

— Դրանց համար խօսք չունեմ: Բայց առհասարակ շատ փշացած մարզիկ են: Առանց խստութեան անկարելի է: Այս պիսիները կան մէջները, որ Աստուած փրկի, ազատի: Այ հէց երէկ ստիպուած էինք երկուսին պատժել:

— Ի՞նչպէս պատժել, — հարցրեց Նեխլիւդօվը:

— Հրամայել էին ճիպուներով ծեծել...

— Բայց չը որ մարմնական պատիժները օրէնքով վերացուած են:

— Իրաւունքներից դրկուածների համար վերացուած չեն: Դրանց կարելի է:

Նեխլիւդօվը յիշեց այն բոլորը, ինչ որ տեսել էր երէկ, սրահում սպասելիս, և հասկացաւ, որ պատիժը տեղի էր ունեցել հէնց այն ժամանակը, երբ ինքը սպասում էր, ու նրան առանձին սաստկութեամբ սպաշարեց այն հետաքրքրութեան, թախիծի, տարակուսանքի և բարոյական, գրեթէ ֆիզիկականի փոխարկուող, զզուանքի խառն զգացմունքը, որ առաջ էլ երբեմն տիրում էր նրան, բայց երբէք այդպէս սաստիկ չէր լինում:

Ականջ չը դնելով բանտապետի օգնականի խօսածին ու չը նայելով իր շուրջը, նա շտապ-շտապ դուրս եկաւ միջանցքից ու դիմեց դէպի գրասենեակը: Բանտապետը միջանցքումն էր: Նա, ուրիշ գործով զբաղուելով, մոռացել էր դուրս կանչել հօգոդուխօսակայային և յիշեց իր խոստումը միայն այն ժամանակ, երբ Նեխլիւդօվը մտաւ գրասենեակը:

— Այս բոպէիս կ'ուղարկեմ նրա յետելից: Մի քիչ նստեցէք այստեղ, — ասաց նա:

## LII

Գրասենեակը երկու սենեակից էր բաղկացած: Առաջին սենեակում, ուր երկու կեղտուա պատուհաններ կային ու մի մեծ ու դուրս պրծած վառարան, որի ծեփը շատ տեղ պոլուել էր, մի անկիւնում զրուած էր մի մեծ չափիչ՝ կալանաւորների հասակը չափելու համար, մի անկիւնում էլ կախուած էր Քրիստոսի մեծ պատկերը: Այդ առաջին սենեակում կանգնած էին մի քանի վերակացուներ: Իսկ միւս սենեակում մօտ քսան հոգի տղամարդիկ ու կանաքը, պատերի երկարութեամբ և առանձին

խմբերով կամ զոյգերով նստած, խօսում էին ցած ձայնով՝  
Պատուհանի մօտ զրուած էր մի զրասեղան:

Բանտապետը նստեց զրասեղանի մօտ և առաջարկեց Նեխ-  
լիւդօվին՝ կողքին զրուած աթոռը: Նեխլիւդօվը նստեց ու  
սկսեց զիտել սենեակում գտնուող մարդկանց:

Ամենից առաջ նրա ուշադրութիւնը զրաւեց մի կարծ ժա-  
կէտով ու գուրեւկան դէմքով երիտասարդ, որ, կանգնած մի  
սեայօն ու արդէն տարիքով կնոջ առաջ, տաք-տաք խօսում էր  
նրա հետ, ձեռները շարժելով: Նրանց կողքին նստած էր մի  
կապոյտ ակնոցաւոր ծերունի, որ բռնած մի կալանաւորական  
խարաթ հագած ջահէլ կնոջ ձեռքից, անշարժ լսում էր նրա  
պատմածը Մի բէալիստ փոքրիկ տղայ դէմքի սառած ու վախ-  
ուորած արտայատութեամբ նայում էր ծերունուն, առանց աշ-  
քը նրանից հեռացնելու, Նրանցից ոչ հեռու, անկիւնում, նստած  
էր սիրահարուածների մի զոյգ: — մի կարծ մազերով ու եռանդու-  
դէմքով շիկաներ, սիրունատես ու բոլորովին ջահէլ աղջիկ, մօ-  
դային հագուստով, և մի նուրբ զիմագծերով ու գանգուր մազե-  
րով գեղեցիկ պատանի, գուտտապէրչէ բաճկրնով: Նրանք, անկիւ-  
նումը նստած, քչփշում էին իրար հետ, ակներեաբար, հալուելով  
սէրից, իսկ սեղանին ամենից մօտիկ նստած էր մի ալեղարդ ու  
սեազգեստ կին, անշուշտ մի մայր: Նա աչքերը սրած նայում էր  
մի նոյնպիսի բաճկրն հագած թոքախտատես երիտասարդի վրայ  
և ուզում էր ինչ-որ մի բան ասել, բայց արտասուքը չէր թող-  
նում, որ խօսի, — սկսում էր ասել ու իսկոյն կանգ էր առնում:  
Երիտասարդի ձեռքին մի թուղթ կար, որ նա ծալծում ու ճմբու-  
տում էր բարկացած դէմքով, անշուշտ այն պատճառով, որ չը գի-  
տէր ինչ անել: Նրանց կողքին նստած էր մի լիքը-լիքը ու կար-  
մրերես սիրուն աղջիկ, շատ գուրս ընկած կոկոն աչքերով և մոխ-  
րագոյն հագուստով և ունենոյցի: Նա նստած էր արտասուղ  
մօր կողքին և քնքշաբար շոյում էր նրա ուսը: Ամեն ինչ գեղե-  
ցիկ էր այդ աղջիկայ մէջ, և մեծ ու սպիտակ ձեռները, և խու-  
զած զանգուր մազերը, և պինդ քիթն ու շրթուկքները: Բայց նրա  
դէմքի զլխաւոր հրապոյը կազմում էին շագանակագոյն, գառ-  
նային, բարի ու շիտակ աչքերը: Նրա սիրուն աչքերը կարուեցին  
մօր դէմքից այն բոսէին, երբ ներս մտաւ Նեխլիւդօվը, և նրանց  
հայեացքները հանդիպեցին իրար: Բայց իսկոյն և եթ նա երեսը  
շուռ տուեց ու սկսեց ինչ-որ ասել իր մօրը: Սիրահարուած  
զոյգից ոչ հեռու նստած էր մի մոայլադէմ սև ու փրչոտ մարդ,  
որ բարկացած խօսում էր մի ներքինիանման անմիրուք այցե-  
լուի հետո Նեխլիւդօվը, բանտապետի կողքին նստած, սաստիկ  
հետաքրքրութեամբ նայում էր իր շուրջը: Այդ լարուած դրու-

թիւնից նրան հանեց մի կարծ խուզուած փռքրիկ տղայ, որ մօ-  
տեցաւ նրան ու բարալիկ ձայնով հարցրեց.

—Դուք ում էք սպասում:

Նեխլիւդովին զարմացրեց այդ հարցը, բայց նայելով երե-  
խային ու տեսնելով նրա ուշադիր ու կայտառ աչքերով լուրջ  
ու խելացի գէմքը, նա լուրջ կերպով պատասխանեց նրան,  
որ սպասում է մի ծանօթ կնոջ:

—Չեր քոյրն է նա,—հարցրեց տղան:

—Զէ, քոյրս չի,—զարմանալով պատասխանեց Նեխլիւդովի:  
—Իսկ դու ում հետ ես այստեղ, —հարցրեց նա տղայից:

—Ես մայրիկի հետ եմ: Նա քաղաքական է, —ասաց տղան:

—Մարիա Պաւլօվնա, վերցրէք Կոլեսյին, —ասաց բանտա-  
պետը, որ երեխ ապօրինի բան էր համարում Նեխլիւդովի խօ-  
սակցութիւնը այդ երեխայի հետ:

Մարիա Պավլօվնան, մյն գառնաչքանի սիրուն աղջիկը, որ  
գրաւել էր Նեխլիւդովի ուշադրութիւնը, վեր կացաւ իր ամ-  
բողջ բարձր հասակով և ուժեղ ու լայն-լայն, գրեթէ առնական  
քայլերով մօտեցաւ Նեխլիւդովին ու երեխային:

—Ի՞նչ է, հարցնում է, թէ ով էք, —հարցրեց օրիորդը  
Նեխլիւդովից, կիսաժպտալով և դիւրահաւատութեամբ ու  
այնպէս պարզ կերպով նայելով նրա աչքերի մէջ, կարծես թէ  
կասկած անդամ չէր կարող լինել, որ ինքը ամենքի հետ ունե-  
ցել է, ունի և պէտք է ունենայ միմիայն պարզ, փաղաքշական  
ու եղբայրական յարաբերութիւններ:

—Շատ հետաքրքիրն է, ուզում է ամեն բան իմանալ, —  
ասաց նա և բոլորովին ժպտաց երեխայի երեսին այնպիսի բա-  
րի ու քաղցր ժպիտով, որ Նեխլիւդովն ու երեխան՝ երկուսով  
էլ նոյնպէս ժպտացին ակամայ:

—Այո, հարցնում էր, թէ ում եմ եկել տեսնելու:

—Մարիա Պավլօվնա, հօ գիտէք, որ չի կարելի խօսել  
կողմնակի մարդկանց հետ, —ասաց բանտապետը:

—Լաւ, լաւ, —ասաց աղջիկը և, իր մեծ ու սպիտակ ձեռ-  
քով բանելով Կոլեսյի ձեռքից, որ աչքը չէր հեռացնում նրանից,  
վերադարձաւ թռախտաւորի մօր մօտ:

—Ում երեխան է, —հարցրեց Նեխլիւդովը բանտապետից:

—Մի քաղաքական յանցաւոր կնոջ: Դա հէնց բանառ: մն  
է ձնուել:

—Միթէ:

—Այո, իսկ այժմ մօր հետ գնալու է Սիբիր:

—Իսկ այն աղջիկը:

— Զեմ կարող պատասխանել ձեր հարցին, — ասաց բանտապետը, ուսերը թօթուելով: —Ահա և Բօգօդուխօվսկայան:

### LIII

Յետեի դռնից թռչկտան քայլուածքով գուրս եկաւ, Փոքրիկ, Նիշար ու դեղին Վերա Եֆրեմօվնան ահազին ու բարի աշքերով և խուզած մազերով:

— Շատ չնորհակալ եմ, որ եկաք, — ասաց նա, սղմելով Նեխլիւդովի ձեռքը: — Յիշեցիք ինձ: Նստենք:

— Երբեք չի մտածում, թէ ձեզ այսպէս կը տեսնեմ:

— Օ՛, ոչինչ, ես շատ լաւ եմ զգում ինձ. այնքան լաւ, այնքան լաւ, որ սրանից լաւ չեմ ել ուզում, — ասում էր Վերա Եֆրեմօվնան, ինչպէս միշտ՝ իր ահազին, բարի ու կլոր աշքերով երկիւդով նայելով Նեխլիւդովի վրայ և պայտապայտ տալով իր ջլուտ, դեղին ու սարսափելի բարակ վիզը, որ երեսում էր սպիտակ բաճկոնի գծուծ, ճմուռած ու կեղտոտ օձիքի մէջից:

Նեխլիւդովը սկսեց հարց ու փորձ անել, թէ ինչպէս էր նա բանտ ընկել, Պատասխանելով նրան, Վերա Եֆրեմօվնան սկսեց մեծ ոգերութեամբ պատմել իր գործը: Նրա խօսքերի մէջ ամեն բռպէ պատահում էին օտարազգի գիտնական բառեր պրօպագանդայի, դէզօրգանիզացիայի, գրուպպաների, սէկցիաների և ենթասէկցիաների մասին, որոնց ինչ լինելը, ինչպէս նա ակներեաբար լիովին հաւատացած էր, յայտնի էր ամենքին, բայց որոնց մասին Նեխլիւդովը ոչինչ չէր լսել երբեք:

Նա պատմում էր Նեխլիւդովին, ակներեաբար լիովին հաւատացած լինելով, որ նրա համար շատ հետաքրքրական և ցանկալի է իմանալ այդ բոլորը, իսկ Նեխլիւդովը նայում էր նրա ողորմելի վզին և ցանցառ ու խճճուած մազերին ու զարմանում, թէ ինչու էր նա այդ բոլորը անում և այժմ պատմում իրանու և լողալի էր թւում Նեխլիւդովին, բայց ոչ ամենեին այնպէս, ինչպէս խղճալի էր գետնախնձորի ծիլերի նման սպիտակած ձեռներով ու դէմքով Մենչօվ գիւղացին, որ առանց որ և է մեղքի նստած էր գարշահոտ բանտում: Վերա Եֆրեմօվնան ամենից աւելի խղճալի էր այն ակնյայտնի խառնաշփոթութեամբ, որ տիրում էր նրա գլխում: Նա, ակներեաբար, հերոսուհի էր համարում ինքն իրան ու պարձենում էր Նեխլիւդովի առաջ, և հէնց այդ ցուցամոլութեան պատճառով էլ առանձնապէս խըղճալի էր թւում նրան: Այդ ցուցամոլական յատկութիւնը Նեխլիւդովը նկատում էր ոչ միայն նրա մէջ, այլ և այդ սենեակում

գտնուող մի քանի ուրիշ անձանց մէջ: Իր գալը գրաւեց այդ անձանց ուշաղրութիւնը և նա զգում էր, որ նրանք այն, ինչ որ անում էին, մի քիչ ուրիշ կերպ էին անում, որովհետեւ ինքը այնտեղ էր: Այդ յատկութիւնը երեսում էր և գուտառապէրչէ բածկոնաւոր երիտասարդի մէջ, և կալանաւորական խալաթ հաղած կնոջ մէջ, և նոյն իսկ սիրահարների զբյուի մէջ: Այդ յատկութիւնը չը կար միայն թռքախտաւոր երիտասարդի, գառա աշքանի գեղեցկուհու և այն փոսաշքանի սև ու փրչու մարդու մէջ, որ խօսում էր ներքինիանման անմիրուք ու նիհար մարդու հետ:

Այն գործը, որի մասին Վերա Եֆրեմօվան ուզում էր խօսել Նեխլիւդօվի հետ, կայանում էր նրանում, որ նրա ընկերուհիներից մէկին, Շուստօվային, որ նոյն իսկ չէր պատկանում նրանց ենթամասնախամբին, ձերբակալել էին, որովհետև մօտը գտել էին որոշ զրգեր ու թղթեր, որոնք պահ էին տըրուած եղել նրան: Վերա Եֆրեմօվան իրան մասամբ մեղաւոր էր համարում Շուստօվայի կալանաւորութեան մէջ և աղաչում էր Նեխլիւդօվին, իբրև կապեր ունեցող մարդու, որ ամեն համարակար միջոց գործ դնի այդ օրիորդին բանտից ազատելու համար:

Նեխլիւդօվը ասաց, որ գժուար թէ ինքը կարողանայ որ և բան անել, բայց խոստացաւ, որ Պետերբուրդ գնացած ժամանակը կը փորձի անել ամեն բան, ինչ հնարաւոր կը լինի:

Իր մասին այսպէս պատմեց Վերա Եֆրեմօվան, Մանկաբարձական կուրսերը աւարտելուց յետոյ նա յարել էր մի որոշ կուսակցութեան: Սկզբում բանը լաւ էր գնում, բայց յետոյ մէկին բռնեցին, թղթեր գտան մօտը ու սկսեցին ամենքին ձերբակալել:

— Ինձ էլ ձերբակալեցին և ահա այժմ աքսոր են ուզարկում... վերջացրեց նա իր պատմութիւնը: — Բայց այդ ոչինչ: Ես հիսնալի եմ զգում ինձ, իմ ինքնաղքացութիւնը օլիմպիական է, — ասաց նա ու ժպտաց ողորմելի ժպիտով:

Նեխլիւդօվը հարցրեց գառնաշքանի օրորդի մասին: Վերա Եֆրեմօվան պատմեց, որ նա մի գեներալի աղջիկ է և ձերբակալուել է այն պատճառով, որ իր վրայ է վերցրել ուրիշի մեղքը, որի համար և այժմ գնում է Սիբիր տաժանակիր աշխատանքների:

— Լաւ անհատ է, ալարուիստ է... գովելով ասաց Վերա Եֆրեմօվան:

Միւս գործը, որի մասին Վերա Եֆրեմօվան ուզում էր խօսել Նեխլիւդօվի հետ, վերաբերում էր Մասլովային, Բան-

տում ամեն ինչ իսկոյն՝ յայտնի էր դառնում բոլորին և նա գիտէր արդէն Մասլօվայի պատմութիւնը ու Նեխիւզովի յարաբրութիւնը նրա հետ, ուստի և խորհուրդ էր տալիս աշխատել, որ Մասլօվային փոխադրենք քաղաքական յանցաւորների բաժանմունքը կամ գոնէ հիւանդապահ նշանակեն հիւանդանոցում, ուր այժմ շատ շատ հիւանդներ կան և աւելորդ հիւանդապահներ են հարկաւոր Նեխիւզովը չնորհակալութիւն յայտնեց նըրան և ասաց, որ կ'աշխատի օգուտ քաղել նրա տուած խորհուրդից:

#### LIV

Նրանց խօսակցութեանը վերջ տուեց բանտապետը, որ տեղից վեր կենալով, ասաց, որ տեսակցութեան ժամանակը լրացել է և պէտք է հեռանալ: Նեխիւզովը վեր կացաւ, մնաս բարե արեց Վերա Եֆրեմօվնայի հետ ու գնաց դէպի դուռը, որի մօտ կանգ առաւ, զիտելով, թէ ինչ էր կատարւում իր առջն: —Պարոններ, ժամանակն է, —կը ինում էր բանտապետը, վեր կենալով տեղից ու նորից նստելով:

Բանտապետի պահանջը սենեակում եղող թէ բանտարկեաններին և թէ այցելուններին առանձին կենդանութիւն տուեց, բայց ոչ ոք չը հեռացաւ: Ոմանք վեր կացան ու շարունակում էին կանգնած խօսել: Ոմանք մնացել էին նստած ու այդպէս շարունակում էին իրանց խօսակցութիւնը: Ոմանք սկսեցին մնաս բարե անել ու լալ Սրտաշարժ էր մանաւանդ թոքախտաւոր երիտասարդի ու մօր հրաժեշտը: Երիտասարդը շարունակ ոլորում էր ձեռքում թուղթը և դէմքը հետզհետէ աւելի ու աւելի չար կերպարանք էր ստանում, չնորհիւ այն սաստիկ ճիգերի, որ նա գործ էր գրում, որպէս զի չը վարակուէր մօր լացից: Իսկ մայրը, լսելով, որ մնաս բարեի ժամանակն է, ընկաւ նրա ուսին ու սկսեց հեկեկալ, ֆսսացնելով քիթը: Գառնաշքանի աղջիկը, որին ակամայ դիտում էր Նեխիւզովը, հեկեկացող մօր առաջ կանգնած, ինչ որ բան էր ասում նրան հանգստացնելու համար: Կապոյտ ակնոցաւոր ծերունին՝ կանգնած բռնել էր իր աղջկայ ձեռքից ու զլխով էր անում նրա սասածներին: Երիտասարդ սիրահարները վեր էին կացել ու, միմեանց ձեռքերից բռնած, լուռ նայում էին իրար աչքերի:

—Այ միայն զրանք են ուրախ,—ցոյց տալով սիրահարների զոյդի վրայ, ասաց կարճ ժակէտաւոր երիտասարդը, որ, Նեխիւզովի կողքին կանգնած, նոյնպէս դիտում էր մնաս բարե անողներին:

Նեխմիւդովի և այդ երիտասարդի հայեացքները իրանց վրայ զգալով, սիրահարները—գուտտապէրչէ բաճկոնաւոր երիտասարդը և շիկահեր սիրուն օրիորդը—մեկնեցին իրար բռնած ձեռքերը, դէպի յետ ձգուեցին ու սկսեցին, ծիծաղելով, պտոյտպոյտ գալ:

—Այս երեկոյ պասկուելու են այստեղ, բանտում, և նորահարսը մարդու հետ գնալու է Սիրիոր.—ասաց երիտասարդը:

—Ո՞վ է այդ պարոնը:

—Տաժաննակիր աշխատանքների է դատապարտուած, թէ դրանք ուրախանում են, բայց մարդու սիրտ մղկտում է լսելիս, —աւելացրեց ժակէտաւոր երիտասարդը, ականջ դնելով թռքախտաւորի մօր հեկեկանքներին:

—Պարոններ, խնդրում եմ, մի ստիպէք ինձ խիստ միջոցների դիմել,—ասում էր բանտապետը. մի քանի անգամ կըրկնելով միենոյն բանը—Խնդրում եմ, խնդրում,—ասում էր նու: Թոյլ ու անվճռական կերպով—Այսպէս բան կը լինի: Վաղուց արդէն ժամանակն անցել է: Զէ, անկարելի է այսպէս: Վերջին անգամն եմ ասում, —կրկնում էր նա թոյլ-թոյլ, մէկ կպցնելով, մէկ էլ հանգնելով իր պապիրոսը:

Վերջապէս բանտարկեալներն ու այցելուները սկսեցին հեռանալ, նրանք՝ ներքին, սրանք՝ արտաքին դռնով: Անցակալանաւոր տղամարդիկը, գուտտապէրչէ բաճկոնովը, թռքախտաւորը և սև ու փրչուած, հեռացաւ նաև Մարիա Պալօվսան՝ բանտումը ծնուած փոքրիկ տղայի հետ:

Այցնելուներն էլ սկսեցին գուրս գալ: Դուրս գնաց կապոյտ ակնոցաւոր ծերունին իր ծանր քայլուածքով. նրա յետեից գուրս գնաց և նեխմիւդովը:

—Այո, զարմանալի իշարդեր են,—ասաց խօսել սիրող երիտասարդ պարմը նեխմիւդովի հետ սանդուխներով իջնելիս, կարծես շարունակելով ընդհատուած խօսակցութիւնը: —Դեռ շաւ է, որ կապիտանը բարի մարդ է ու կանոններին խիստ չի հետեւում: Գոնէ խօսում են իրար հետ ու միսիթարւում:

Երբ նեխմիւդովը, խօսելով Մեղինցեվի հետ,—այդպէս ասաց իր ազգանունը խօսել սիրող երիտասարդը,—իջաւ սրանը, նրանց մօտեցաւ բանտապետը յոդնած կերպարանքով:

—Ուրեմն եթէ ուզում էք տեսնուել Մասլօվայի հետ, վաղը համեցէք,—ասաց նա, ակներևաբար ցանկանալով սիրամիր լինել նեխմիւդովի վերաբերմամբ:

—Շատ լաւ, —ասաց նեխմիւդովը ու շտապեց զուրս գալ: «Ինչո՞ւ է այսպէս», հարցնում էր ինքն իրան նեխմիւդովը, որ այժմ սաստիկ ոյժով զգում էր այն բարոյական, զրեթէ փի-

զիկանի փոխուող, զզուանքը, որ նա միշտ զգում էր բանտում, — հարցնում էր և պատասխան չէր դանում:

LV

Միւս օրը Նեխլիւդովը գնաց փաստաբանի մօտ ու, յայտնելով նրան Մենչօվների դործի էռութիւնը, ինդրեց պաշտպանել նրանց դատը: Փաստաբանը լսեց և ասաց, որ աշքի կ'անցնի դործը և, եթէ ամեն ինչ այնպէս է, ինչպէս պատմեց Նեխլիւդովը, առանց որ և է վարձատրութեան յանձն կ'առնի պաշտպանել նրանց: Նեխլիւդովը, ի միջի այլոց, պատմեց փաստաբանին այն, որ 130 հոգի թիւրիմացութեամբ պահւում են բանտում, ու հարցրեց՝ ումնից է կախուած այդ, ով է մեղաւորը Փաստաբանը լրւու մնաց մի քիչ ժամանակ, ակներեաբար ցանկանալով ճշտութեամբ պատասխանել:

— Ո՞վ է մեղաւորը? Ոչ ոք, — ասաց նա վճռական կերպով: — Դատախազին ասէք — նա կ'ասի, որ նահանգապետն է մեղաւոր, նահանգապետին էլ որ ասէք, կ'ասի, թէ դատախազն է մեղաւոր: Ոչ ոք մեղաւոր չէ:

— Ես իսկոյն գնալու եմ Մասլեննիկօվի մօտ. կ'ասեմ նրան:

— Զուր աշխատանք, — ժպտալով առարկեց փաստաբանը: — Նա այնպիսի, — հօ աղգական կամ բարեկամ չէ ձեզ, — այնպիսի, ներեցէք ասել, հաստագլուխ մարդ է և միենոյն ժամանակ խորամանել աղուէս, որ հատը չէք գտնի:

Նեխլիւդովը, մտարերելով, թէ ինչ էր ասում Մասլեննիկօվը այդ փաստաբանի մասին, ոչինչ չը պատասխանեց ու, մնաս բարե ասելով, գնաց Մասլեննիկօվի մօտ:

Մասլեննիկօվից նա երկու բան ունէր ինդրելու, — մէկ, որ Մասլօվային փոխադրել տար հիւանդանոցը, մէկ էլ, որ, եթէ կարելի էր, օգնէր 130 անանցաթուղթ թշուառներին: Թէպէտե սաստիկ ծանր էր նրա համար ինդիրքով դիմել մի մարդու, որին ինքը չէր յարգում, սակայն դա միակ միջոցն էր այդ նպատակին հասնելու համար և նա ստիպուած էր դիմել այդ միջոցին:

Կառքով մօտենալով Մասլեննիկօվի տանը, Նեխլիւդովը տեսաւ, որ մուտքի առաջ կանգնած են մի բանի զանգանատեսակ կառքեր, ու յիշեց, որ, ինչպէս վերջին անդամ իրան ասաց Մասլեննիկօվը, այդ օրը նրա կողջ ընդունելութեան օրն էր: Այն ժամանակ, երբ Նեխլիւդովի կառքը մօտենում էր մուտքին, այնտեղ կանգնած էր մի փակ կառք և կօկարդաւոր գլխարկով ու ումնոցով մի լաքէյ դռան շէմքիցը նստացնում էր կառ-

քի մէջ մի տիկնոց, որ, հագուստի տուար բարձրացնելով, բաց  
էր արել հողաթափները և սևապատ ու բարակ պճեղները,  
կանգնած կառքերի մէջ Նեխլիւդովը ճանաչեց Կօրչագինների  
փակ լանդօն: Նրանց սպիտակահեր ու կարմրերնս կառապանը  
յարգալից և քաղցր արտայայտութեամբ հանեց գլխարկը նրա  
առաջ, իբր առանձնապէս ծանօթ աղայի առաջ: Նեխլիւդովը  
ուզում էր արդէն հարցնել դռնապանից, թէ որտեղ է Միխայիլ  
իշխանօվիչը (Մասլենիկօվը), երբ նա ինքը երևաց գորգապատ  
սանդուխի վրայ, ճանապարհ դնելով մի շատ կարեոր հիւրի,  
այնպիսի հիւրերից մէկին, որոնց նա ճանապարհ էր դնում ոչ  
միայն մինչև վերնագաւիթը, այլ և մինչև ներքև: Այդ շատ կա-  
րենոր զինուորական հիւրը, ներքեւ իջնելիս, ֆրանսերէն լեղուով  
խօսում էր քաղաքումը հիմնուող ապաստարանների օգտին կայա-  
նալիք վիճակախաղի մասին, այն կարծիքը յայտնելով, որ այդ  
շատ լաւ զբաղմունք է տիկինների համար, «աս իրանք են  
ուրախանում, համ էլ փող են հաւաքում»:

—Qu'elles s'amusent et que le bon Dieu les bénisse (*թող*  
զուարձանան և թող բարի Աստուծու օրհնութիւնը լինի նրանց  
վրայ): —Ա՛, բարե, Նեխլիւդովի ինչո՞ւ վազուց է չէք երեսում, —  
ողջունեց նա Նեխլիւդովին: —Allez présenter vos devoirs à  
madame (գնացէք ձեր յարգանքները մատուցանելու տիկինով):  
Կօրչագիններն էլ այստեղ են: Et Nadine Buxsheyden. Toutes  
les jolies femmes de la ville (նաև Նադին Բուշհանչվուէնը և  
առհասարակ մեր քաղաքի բոլոր սիրուն կանայք), —ասաց նա,  
մի քիչ բարձրացնելով իր զինուորական ուսերը ու մօտեցնելով  
նրանց իր ոսկերիզաւոր հոյակապ լսքէին, որ պատրաստ բռնել  
էր նրա վերարկուն վրան զցելու համար: —A revoir, mon cher  
(յուեսութիւն, սիրելիս): Նա մէկ էլ սղմեց Մասլենիկօվի  
ձեռքը:

—Դէ գնանք վերև, որքան ուրախ եմ, —յուզուած ասաց  
Մասլենիկօվը, թեր զցելով Նեխլիւդովի թեին և, չը նայելով  
իր ահազին կազմուածքին, արագ-արագ քաշ տալով նրան դէպի  
վեր: Մասլենիկօվը մի առանձին ուրախ յուզմունք մէջ էր,  
որի պատճառը այն ուշադրութիւնն էր, որ ցոյց էր տուել նրա  
վերաբերմամբ այն կարեոր անձը: Ամեն մի այդպիսի ուշա-  
գրութիւն այնպիսի հրճուանք էր պատճառում Մասլենիկօվին,  
ինչպիսի հրճուանք զգում է մի շողովքոր ջնիկ, երբ տէրը շոյ-  
ում է նրան, զգում է ու քորում է ականջատակիրը: Շնիկը  
հրճուանքից պտոյտ է ածում պոչը, կուչ է գալիս, քծում է,  
ականջները հուզ է տալիս ու խելառի պէս պտոյտ-պտոյտ է  
գալիս: Մասլենիկօվը պատրաստ էր նոյնն անել: Նա չէր նկա-